

1473

511(076)  
S - 46

2010

51(076)  
LSS - 46

ՀԱՅՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐՍՖԻԸՆ

m.6

# ԹԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ



Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻՆԵՐԻ ԴԱՍՀՆԹԱՑՔ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.



Յօրի 6 եց

Յ. Տէ՛մ-Միւսաքենան



ԹԻԱԲԱՆԱԿԱՆ

Բաժ. ՊՐՈԴՐԵՍՍ, տպար. Դվորց. փ. առ. Վրաց Ազնւականների

1310

Վ 951  
“Մշակ” իր տպաքան պատ

510  
97-515

79

511(076)

S-46 այց

ԿՐԱԶՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԺԻՇՃ

## ԹԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ



Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻՆԵՐԻ ԴԱՍԼՐԱՅՔ



Յօրի 6 եց

Յ. Տէ՛ր-Միհաբեան

Տ 0 0 91

Թ Ի Ց Լ Ի Ս

Բաժ. «ՊՐՈՊՐԵՍ» տպար., Գվագովայա փող., տուն Վերաց Ազն.

1910

36641 աւ.հ.

Յ Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս դասագրքով լրանում է հրատարակածս իրաշրջանների վերածւած թւաբանական խնդիրների ժողովածուների քառամեայ դասընթացը: Այս ժողովածուի հետ միաժամանակ լոյս է տեսնում առաջին անգամ հրատարակածս Գ. տարւայ ժողովածուն երկրորդ բարեփոխւած ու լրացրած տպագրութեամբ: Ընթերցողը կըտեսնի, որ այս երկու առաջին տարիների խնդիրների ժողովածուն էլ պատահական խանուորդ չէ, որ սա էլ փոքրիկների մտաշրջանից կամ նրանց մտաշրջանին մօտ խնդիրներից է. կազմւած: Այս ժողովածուի 602 գործնական խնդիրներից 468-ը վերածւած են այդպիսի ամբողջական իրաշրջանների, իսկ միւսները որոշ տեսակի կամ տիպի խնդիրների խմբակներ ներկայացնելով՝ մասամբ դուրս են եկել այս իրաշրջաններից և գործնական կեանքի աւելի լայն իրաշրջաններ ի նկատի ունեցել:

Հարտման և Ռուզամ հեղինակների դասագրքից այս ձեռնարկիս համար աւելի օգուտ եմ քաղել, վերացակտն թւերով խնդիրների (օրինակների) ընթացքին հետևելով:

Չորս միացած գործողութիւններին վերաբերեալ խնդիրներից սկսած՝ ժողովածուիս վերջին մասի համար՝ խնդիրներ քաղել եմ Հարտման և Ռուզամի, Սոկոլով-Սախարովի, Կամարսկու, Վիշնևսկու, Գոլգենբերգի և Սանդոմիրսկու ժողովածուներից:

Այս ժողովածուն պէտք է լինի իսկապէս աւելի երկրորդ տարւայ դասագիրք աշակերտների ձեռքը տալու համար: Ասածին տարում այս գիրքն ինքն ուսուցիչը պէտք է ձեռքի տակ ունենայ, իսկ աշակերտներին պէտք է տալ առաջին տարում այն դպրոցներում, ուր մի սենեկում նստած են լինում տարբեր դասընթացներ անցնող աշակերտներ: Այստեղ մասնաւորապէս օրինակները, վերջերը, յաջող հանգամանքներում, մասամբ նաև խընդիրները կարենի Ելոելեայն զբաղմունքի նիւթ զարձնել: Երկրորդ տարւայ դասընթացում այսպիսի զբաղմունքներին առաջ ու բազմակողմանի նիւթ կարող են տալ դասագրքիս նաև չորս գործութիւններին վերաբերեալ աղիսակները կամ նաշւետախտակները: Այս աղիսակներից նորմալ զբրոցները օգուտ պէտք է քաղեն բանաւոր վարժութիւնների համար: Հիմա, Ռուզամատանում, էլ հրատարակւում են այդպիսի տախտակներ դասարանի պատից

1002

2019-60

կախելու համար: Առաջին տախտակի տակ դրւած են վարժութիւնների այն շարքերը, որոնց օրինակով աշակերտները կը կարողանան բազմաթիւ օրինակներ կազմել՝ առանց դասատուի միջամտութեան:

Մեր ծխական դպրոցների համար 1906 թ. ծրագրած նիւթերի ընթացքով առաջին տարին պէտք է անցնել 1—20 չորս գործողութիւնները: Ներկայ ժողովածուի մէջ ուրիշ սխտեմով են դասաւորւած նիւթերը, այսինքն՝ 1—10 չորս գործողութիւններից յետոյ՝ անմիջապէս 1—100 տասնեակներով գործողութիւններն են աւանդում: Թէ այս և թէ այն սխտեմն ունին իրենց կողմը ծանրակիս առաւելութիւններ և հերինականուր դասագրքեր: 1—10 միաւորներից յետոյ 1—10 տասնեակների գործողութիւններն առանձին դժւարութիւն չեն պատճառում. աւելի հեշտ են համարում՝ քան 1—20 շրջանի գործողութիւնները: Բայց պէտք է այն էլ ի նկատի ունենալ, որ տասնեակներով խնդիրները բնականաբար աւելի շինծու, անորմալ բնաւորութիւն են ունենում, քանի որ նրանցից քչերը կեանքից ու մանուկների մտաշրջանից բղխած են լինում, և որ սկսնակների միտքը պտոյտ է գալիս աւելի 1—20-ի թւաշրջանում: Թէ այս և թէ այն ընթացքով անցնելու ամեն դիւրութիւն ներկայացնում է դասագիրքս:

Որպէս զի երեխանները շարլոնական գործողութիւնների չվարժեն, կարելի է և պէտք է, օր. գումարման խնդիրների հետ նոյն թւաշրջանից նաև հանման խնդիրներ տալ, բազմապատկման խնդիրների հետ՝ բաժանման:

Փողովածուիս մէջ առաջին տասնեակի թւերն առանձինառանձին են մշակւած և թւալատկերներով թէ իբրև սոսկական քանակութիւններ և թէ գործողութեան տարրեր են ներկայացւած: Այս հիմնական թւերի ու սրանցից կազմւած գործողութիւնների վրայ պէտք էր առանձին ուշադրութիւն դարձնել: Այս թւապատկերները հիմնական թւերի ներկայացուցիչները և գործողութիւնների հիմքերը լինելով՝ պէտք է յետագայ թւարանական գործողութիւնների յենակէտերը դառնան. երեխանները պէտք է սկզբները միշտ նրանց օգնութեանը դիմեն թէ երեակայութեամբ (պատկերները գիտակցութեան մէջ բերելով) և թէ համրիչի միջոցով որոշ քանակութիւններ ու գործողութիւններ ներկայացնելով: Մեր դպրոցներում հիմա շատ է տարածւած շւերգական համրիչը, որ բաւականին յարմարութիւններ է տալիս հիմնական թւերը քառեակներով երկու շարքերում ներկայացնելու և սրան-

ցով գործողութիւններ կատարելու համար, ինչպէս որ ցոյց արւածէ ձեռնարկիս օրինակներով: Պէտք է լայն չափերով օգուտ քաղելթւապատկերներից և այս զննական միջոցից<sup>\*)</sup>:

1—10 թւակարգի չորս գործողութիւններն են յարմար համարեցի պատկերացնել կետաւոր քառեակներով կամ սրանց մասերով: Այս գործողութիւնները պլաստիկ կամ բելիէֆ եղանակով շատ հեշտ կարելի է ներկայացնել տւածս օրինակների հետևողութեամբ նաև համրիչի գնդակներով:

Գործողութիւնների միայն նշաններն այստեղ կը պակասէին: Սրա համար առաջարկում եմ հետևեալ ցոյցանակը: Պէտք է շինել տալ մի արշինանոց  $1\frac{1}{2}$  վերջոկ լայնութեամբ սպիտակ ներկած տախտակ, սրա եթիկու երեսների երկու ծայրերին ու գոյնով նշանակել 4 գործողութիւնների նշանները և գործողութիւն կատարելիս գրքի օրինակների պէս՝ այս կամ այն նշանը գնդակների միջև բռնել:

Գործնական ու վերացական խնդիրները (օրինակները), ինչպէս միւս ժողովածուներիս մէջ, համընթաց դասաւորւած են: Օրինակներն այն չափով են մէջ բերւած, որ բոլորը վարժութեան նիւթ դառնան: Միայն թէ ի նկատի պէտք է ունենալ, որ օրինակների այդ շարքերը մաս-մաս վարժութեան նիւթ դառնան, նայելով գործնական խնդիրների ամին անգամւայ պահանջին: Գործնական խնդիրները շատ ժամանակ են պահանջում: Միայն նրանց միջոցով կամ վերացական խնդիրներին աննշան, կամ պատահական տեղ տալով, թւարանութիւնը երեխանների ընթացիկ սեփականութիւն դարձնել հնարաւոր չէ: Գերմանական հեղինակներն այնքան կարևոր են համարում վերացական թւերով գրաւոր ու բանաւոր վարժութիւնները, որ նրանց ժողովածուների մէջ՝ շատ աննշան բացառութեամբ՝ սրանք միշտ գերակշռում են: Հայ ուսուցիչն էլ պէտք է լաւ գիտակցէ և երբէք չմոռանայ, որ երական կեանքում, երբ մեր տոշն գործնական խնդիրներ են դրում, մենք նախ վերացական թւերով ենք գործողութիւններ

<sup>\*)</sup> Շատ օգտակար կլինէր, եթէ երեխաններն էլ իրանց ձեռքում ունենայն հետևեալ պարզ ձեր վերածած փոքրիկ համրիչը և իրանց ձեռքով էլ գործողութիւններ կատարեին: Կարելի էլ Յ վերջոկ երկայնութեան մի զորք երկաթէ թերերի վրայ շարեւ տալ մի մի տասնեակ հրուն կամ տերողորմեայի հատեր և ապա, այդ երկաթների ծայրերը մտցնելով երկու զուգանեսական մի վերջոկանոց ձողիկների մէջ՝ ամրացնել տալ: Իրանք երեխաններն էլ կըկարողաւային այսպիսի համրիչներ շինել, եթէ մի անգամ օրինակը տեսնէին:

կատարում մեր մտքում և ապա ստացած թւերին յարակցում ենք  
նիւթի գաղափարը, ուրիշ խօսքով՝ անւանական դարձնում նրանց:

Առաջին երեք տարիների գործնական խնդիրների մեծամաս-  
նութիւնը, իրական կեանքի պահանջի ձայնին լսելով պէտք է մեծ  
մասով բանաւոր լուծել տալ. եթէ խնդիրը երեքից աւելի թւեր ու-  
նի, կարելի է կիսագրաւոր եղանակով լուծել, միայն թւերը գրել  
տալով: Ուրեմն միայն բարդ խնդիրները հարկ կը լինէք գրա-  
ւոր եղանակներով լուծել: Պարզ խնդիրներն էլ բանաւոր լուծե-  
լուց յետոյ՝ պէտք է մերթ ընդ մերթ նաև գրաւոր ձևերով լուծել  
տալ՝ այս ձևերը իրացնել տալու համար:

Վերացական թւերով բանաւոր վարժութիւնների նիւթերը  
կամ ուսուցիչը կարող է ասել, կամ թէ չէ՝ իրանք աշակերտները  
կարող են ուղղակի գրքից կարդալ ու լուծել: Ուսուցիչն այստեղ  
էլ, որքան կարելի է, պէտք է քիչ խօսի և հնարաւոր եղածին  
չափ՝ շատ խօսեցնէ իր աշակերտներին: Այս նպատակին ծառայում  
են նաև վերև նկարագրւած չորս գործողութիւնների աղիւսակ-  
ները կամ հաշւետախտակները: Բացառութիւն պէտք է կազմեն  
տակտավ լուծելի խնդիրները, որոնց տարրերն ինքն ուսուցիչը  
հետզետէ ասում է, և ամեն անգամ այնքան ժամանակ տալիս,  
որ աշակերտները խնդրի մասնաւոր պատասխաններն անմիջապէս  
գտնեն. այնպէս որ աշակերտները ամեն անգամ միայն մի թիւ  
են մտքներումը պահում, և վերջին թիւը լսելուն պէտք միայն  
վերջի գործողութիւնը կատարելով խսկոյն վերջնական պատաս-  
խանը գտնում են:

Այս դիտողութիւններով այստեղ բաւականանալով հարցասէր  
ուսուցիչներն մատնացոյց եմ անում փոխադրած մեթոդիկան և  
ուղեցոյցը, որոնց մէջ նաև թւաբանութեան ուսուցման թէ սկզ-  
բունքներն են մանրամասն արտայայտած և թէ մեթոդը, և մշակ-  
ւած դասերով կամ օրինակներով այս ամենը լուսարանած են:

Դասագրերս գործածող դասաւուների փորձառութիւնից  
բղիսած տարակուսանքները, կարծիքները ոչ միայն շնորհակալու-  
թեամբ ընդունում են, այլ և ցանկալի եմ համարում, որ հարցա-  
սէր ուսուցիչներն առհասարակ կենդանի կազ պահպանէին դա-  
սագրեր յօրինողների, փոխադրողների, թարգմանողների հետ:  
Նրանք այսպիսով շատ նպաստած են լինէին այս գրականու-  
թեան գարգացման:

Յօրինողը:

Թիֆլիս: 1910 թ. ապրիլի 24-ին:

$$\begin{matrix} \bullet & \bullet \\ \bullet & \bullet \end{matrix} = \begin{matrix} \bullet \\ \bullet \end{matrix} + \begin{matrix} \bullet \\ \bullet \end{matrix} \quad \text{ՄԻԱՅ} \quad \begin{matrix} \bullet & \bullet \\ \bullet & \bullet \end{matrix}$$

դիմուր և ու չափ առան դիմուր և դիմուր: Ե  
ունակ դիմուր մազն ամ անձ ունակ  
առան 1 ու ունակ ամ անձ առան: 2  
դիմուր ունակ 2 ու ունակ դիմուր առան  
ամ 2 ու ունակ առան 2 ու ունակ դիմուր: 3

## ԱՌԱՋԻՆ ԸՆԹԱՑՔ

1. 1-ից մինչև 10-ի թւակարգը

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

2. ԳՈՒՄԱՐԵԼ

Իրաշըջան՝ դպրոցում՝

$$\begin{matrix} \bullet & \bullet \\ \bullet & \bullet \end{matrix} = \begin{matrix} \bullet \\ \bullet \end{matrix} + \begin{matrix} \bullet \\ \bullet \end{matrix} \quad \text{ԵՐԵՖ} \quad \begin{matrix} \bullet \\ \bullet \end{matrix} + \begin{matrix} \bullet \\ \bullet \end{matrix} = \begin{matrix} \bullet & \bullet \\ \bullet & \bullet \end{matrix}$$

1. Դասարանի մի պատից կախւած են 2 պատկեր, միւսից 1 պատկեր: Քանի պատկեր կայ դասարանում:

2. Դասարանի մի պատը 1 լուսամուտ ունի, միւսը՝ 2: Քանի լուսամուտ ունի դասարանը:

3. Գրիգորը 2 տետրակ առաւ, իսկ նրա քոյրը 1 տետրակի: Երկուսը միասին որքան տետրակ առան:

4. Սաթենիկը 1 սկ մատիտ ունի, 2 հատ էլ գու-  
նաւոր: Քանի մատիտ ունի նաև:

5. Արամը 1 գրչածայր ունի, Պետրոսը 2 հատ նը-  
րանից աւելի: Պետրոսը քանի գրչածայր ունի:

6. Արմենակը 2 գիրք ունի, նրա քոյրը Նազիկը՝ 1 հատ աւելի: Նազիկը Քանի գիրք ունի:

Օքին ակներ.

$$\begin{array}{l} 1. 1+1 \\ 1+1+1 \\ 2+1 \\ 1+2 \end{array} \quad \begin{array}{l} 2. 1+? = 2 \\ 1+? = 3 \\ 1+? = 3 \end{array}$$

$$\begin{array}{c} \bullet\bullet \\ \bullet\bullet \end{array} \quad \text{20}\text{P}\text{U} \quad \begin{array}{c} \bullet \\ 4 \end{array} + \begin{array}{c} \bullet \\ \bullet \end{array} = \begin{array}{c} \bullet\bullet \\ \bullet\bullet \end{array}$$

7. Սարգիսը 3 պատկեր առաւ, առաջ էլ 1 պատկեր ունէր: Հիմա նա որքան պատկեր ունի:

8. Մի անգամ առաջին նստարանից չէր եկել 1 աշակերտ, երկրորդ նստարանից չին եկել 3 աշակերտ: Բոլոր չեկողները որքան էին:

9. Դասարանը մի օր 2 տառ գրեց, միւս օրը՝ 2 աւելի: Միւս օրը քանի տառ գրեց:

10. Զարուհին մի տետրակ պէտք է առնէր, որի գիւղը 4 կոպէկ էր. Նա երկու կոպէկ ունէր: Նա մայրիկից քանի կոպէկ էլ պէտք է առնէր՝ այդ տետրակը գնելու համար:

11. Գէորգը մի ուետին պէտք է առնէր, որ 4 կոպէկ արժէր. Նա միայն 1 կոպէկ ունէր: Նա քանի կոպէկ էլ պէտք է դնէր իր ունեցածի վրայ:

Օրինակներ.

$$\begin{array}{c} 3+1 \\ 1+3 \\ 2+2 \end{array}$$

$$\begin{array}{c} 3+? = 4 \\ 1+? = 4 \\ 2+? = 4 \end{array}$$

$$\begin{array}{c} \bullet\bullet \\ \bullet\bullet \end{array} \quad \text{հինգ} \quad \begin{array}{c} \bullet \\ 5 \end{array} + \begin{array}{c} \bullet \\ \bullet \end{array} = \begin{array}{c} \bullet\bullet \\ \bullet\bullet \end{array} \quad \bullet$$

12. Մի օր ուսուցիչը դասարանին 4 խնդիր տւեց, 1 հատ էլ՝ աշակերտներից մէկը տւեց: Այդ օրն աշակերտներին քանի խնդիր տւին:

13. Թագուհին 1 պատկեր նկարեց, ընկերուհին՝ 4 աւելի: Ընկերուհին քանի պատկեր նկարեց:

14. Տիգրանը 2 խնդիր լուծեց, Սարգիսը՝ նրանից 3 աւելի: Սարգիսը որքան խնդիր լուծեց:

15. Առաջին դասարանը 3 դաս ունեցաւ, երրորդը՝ 2

դաս աւելի: Երկու դասարանները միասին քանի դաս ունեցան:

16. Գագիկը 2 օր դպրոց չեկաւ, Վարդանը՝ 3 օր: Երկուսը միասին քանի օր դպրոց չեկան:

Օրինակներ.

$$\begin{array}{c} 5. \quad 4+1 \\ 1+4 \\ 3+2 \\ 2+3 \end{array}$$

$$\begin{array}{c} 6. \quad 4+?=5 \\ 1+?=5 \\ 3+?=5 \\ 2+?=5 \end{array}$$

Իրաշըջան՝ ընտանիքում

$$\begin{array}{c} \bullet\bullet \\ \bullet\bullet \end{array} \quad \text{ՎԵՅ} \quad \begin{array}{c} \bullet\bullet \\ 6 \end{array} + \begin{array}{c} \bullet \\ \bullet \end{array} = \begin{array}{c} \bullet\bullet \\ \bullet\bullet \end{array} \quad \bullet$$

17. Ղուկասենց տանը 1 աղջիկ և 5 մանչ կան: Նրանք քանի երեխայ ունին:

18. Արուսեակի տօնին 4 երեխաներ հիւր եկան, ինքն էլ 1 եղբայր ունէր: Բոլորը միասին որքան երեխայ եղան:

19. Արմենուհին 2 տարեկան է, նրա եղբայր Յովսէփիկը 2 տարի նրանից մեծ է, իսկ նրանց Սրբուհի քոյրիկը Յովսէփիկից 2 տարի մեծ է: Քանի տարեկան է Սրբուհին:

20. Յակոբենց ընտանիքում բացի նրա հօրից և մօրից կան 4 քոյր ու եղբայր: Նրանք քանի հոգի են:

21. Սարգսեանենց ընտանիքում 3 հոգի կայ, իսկ նուրակեանենց ընտանիքում՝ 3 աւելի: Նուրակեանենց ընտանիքում քանի մարդ կայ:

Օրինակներ.

$$\begin{array}{c} 7. \quad 5+1 \\ 1+5 \\ 4+1 \\ 1+4 \\ 3+3 \end{array} \quad \begin{array}{c} 8. \quad 1+2+2+1 \\ 2+2+2 \\ 1+2+1+2 \\ 2+2+2 \\ 1+2+2 \end{array} \quad \begin{array}{c} 9. \quad 5+?=6 \\ 4+?=6 \\ 3+?=6 \\ 2+?=6 \\ 1+?=6 \end{array}$$

$$\begin{array}{c} \text{60թԸ} \\ \text{7} \\ \text{60թԸ} \end{array} + \begin{array}{c} \text{60թԸ} \\ \text{7} \\ \text{60թԸ} \end{array} = \begin{array}{c} \text{60թԸ} \\ \text{7} \\ \text{60թԸ} \end{array}$$

22. Մարդարիտենք ծաղկամանով 1 բոյս ունէին, Նրա հայրիկը 6 հատ էլ նոր առաւ։ Հիմա նրանք ո՞րքան բոյս ունեցան։

23. Դաւթեանենք 7 քոյր ու եղբայր են. նրանց մայրիկը երկուսի համար մէկ մէկ զոյգ նոր գուլպայ գործեց։ Ո՞րքան զոյգ էլ պէտք է գործէ նա, որ բոլորն էլ մէկ մէկ զոյգ նոր գուլպաներ ունենան։

24. Աշոտենց տանը 5 հաւ կայ, իսկ բագեր՝ 2 աւելի։ Նրանք ո՞րքան թռչուն ունին։

25. Շողակաթենց տանը 2 ոսկէձկնիկներ կան, իսկ Յովհաննէսենց տանը՝ 5 աւելի։ Յովհաննէսենց տանը քանի ոսկէձկնիկ կայ։

26. Հմայեակենց տնեցիներից սեղանի շուրջը նստած էին 4 հոգի, 3 հոգի էլ յետոյ եկան։ Սեղանի շուրջը քանի հոգի նստած կար։

27. Բագրատի մայրիկը 3 կոճակ կարեց, իսկ քոյրիկը՝ 4 աւելի։ Նրա քոյրիկը քանի կոճակ կարեց։

$$10. 6+1 \quad 11. 1+2+3+1 \quad 12. 1+?=7$$

$$\begin{array}{lll} 1+6 & 2+3+2 & 6+?=7 \\ 5+2 & 3+2+1+1 & 2+?=7 \\ 2+5 & & 5+?=7 \\ 4+3 & & 4+?=7 \\ 3+4 & & 3+?=7 \end{array}$$

$$\begin{array}{c} \text{80թԸ} \\ \text{8} \\ \text{80թԸ} \end{array} + \begin{array}{c} \text{80թԸ} \\ \text{8} \\ \text{80թԸ} \end{array} = \begin{array}{c} \text{80թԸ} \\ \text{8} \\ \text{80թԸ} \end{array}$$

28. Գոհարիկն իր տօնին հիւրերից 5 նւէր ստացաւ, տանեցիք էլ 3 նւէր տվին նրան։ Նա քանի նւէր ստացաւ։

29. Անահատի մայրիկը 6 զոյգ գուլպայ գործեց, Տիգ-

րանուհու մայրիկը՝ նրանից 2 զոյգ աւելի։ Տիգրանուհու մայրիկը քանի զոյգ գուլպայ գործեց։

30. Մարդարը 3 աման ջուր կրեց աղբիւրից, Գեղամը՝ նրանից 5 աւելի։ Գեղամը քանի աման ջուր կրեց։

31. Աբդարեանենք օրական 4 հաց են ուտում, Գէորգեանենք՝ 4 աւելի։ Ուրեմն Գէորգեանենք օրական քանի հաց են ուտում։

32. Երեխան, ասեղների հետ խաղալով՝ առաջ 4 հատ կորցրեց, յետոյ՝ 1 հատ, վերջն էլ՝ 3 հատ։ Նրա բոլոր կորցրածները ո՞րքան եղան։

### Օրինակներ.

$$\begin{array}{lll} 13. 7+1 & 14. 5+2+1 & 15. 6+?=8 \\ 1+7 & 4+2+2 & 4+?=8 \\ 6+2 & 2+1+3+2 & 3+?=8 \\ 2+6 & 3+1+1+3 & 1+?=8 \\ 5+3 & & 5+?=8 \\ 3+5 & & 2+?=8 \\ 4+4 & & \end{array}$$

Իրաշըջան՝ պարտէզում եւ ըանջարանոցում

$$\begin{array}{c} \text{60թԸ} \\ \text{9} \\ \text{60թԸ} \end{array} + \begin{array}{c} \text{60թԸ} \\ \text{9} \\ \text{60թԸ} \end{array} = \begin{array}{c} \text{60թԸ} \\ \text{9} \\ \text{60թԸ} \end{array}$$

33. Տանձի ծառը 7 պտուղ տւեց, խնձորինը՝ 2 աւելի։ Խնձորի ծառը քանի պտուղ տւեց։

34. Կարմիր վարդենու վրայ 6 հատ վարդեր էին բացւել, իսկ դեղին վարդենու վրայ՝ 3 աւելի։ Դեղին վարդենու վրայ քանի վարդ էր բացւել։

35. Մի մարգում 5 շարք ծաղիկ կար, միւսում՝ 4։ Երկու մարգում քանի շարք ծաղիկ կար։

36. Պարտէզի համար առաջ 6 սայլ սկ հող բերին, յետոյ՝ 1 սայլ, վերջն էլ՝ 2 սայլ բերին։ Բոլորը միասին ո՞րքան սայլ հող բերին։

37. Աղջիկն իրանց պարտէզից առաջ ծաղկի 5 սերմ հաւաքեց, յետոյ՝ 2, վերջն էլ՝ դարձեալ 2: Բոլոր հաւաքած սերմերը որքան եղան:

Օրինակներ.

$$\begin{array}{lll} 16. \quad 7+2 & 17. \quad 4+2+3 & 18. \quad 5+?=9 \\ 6+2 & 5+2+2 & 3+?=9 \\ 5+4 & 6+1+3 & 2+?=9 \end{array}$$



38. Յոլակն իրանց պարտէզում մի օր 8 ժամ աշխատեց, իսկ միւսը օրը՝ 2 ժամ: Նա քանի ժամ աշխատեց երկու օրում:

39. Համազասպի հայրիկը պարտէզում մարգեր շինելու համար առաջ 7 օր աշխատեց, յետոյ էլ՝ 3 օր: Նրա աշխատած բոլոր օրերը որքան եղան:

40. Թրթուրները 5 կաղամբ էին փչացրել, իսկ կարկուտը՝ 5 աւելի: Կարկուտը քանի կաղամբ փչացրեց:

41. Քամին նոր տնկւած ծառերից 4 հատը վայր էր ձգել, իսկ նրանցից 6 հատը մնացել էին տնկած: Քանի նոր ծառ էին տնկւած եղել:

42. Թամարան պարտէզում 2 ծառ տնկեց, Վարդանը՝ 3, Համազասպը՝ Վարդանի տնկածների չափ, իսկ Հեղուշիկը՝ Թամարայի տնկածների չափ: Բոլորը միասին քանի ծառ տնկեցին:

Օրինակներ.

$$\begin{array}{lll} 19. \quad 8+2 & 20. \quad 2+5+3 & 21. \quad 9+?=10 \\ 5+5 & 4+3+3 & 6+?=10 \\ 7+3 & 6+2+2 & 4+?=10 \\ 6+4 & 7+1+2 & 2+?=10 \\ & & 5+?=10 \\ & & 8+?=10 \end{array}$$

$$\begin{array}{llllll} 22. \quad 1+2 & 23. \quad 7+2 & 24. \quad 5+3 & 25. \quad 4+4 & 26. \quad 4+5 & 27. \quad 1+7 \\ 2+2 & 8+2 & 6+3 & 5+4 & 5+5 & 2+7 \\ 3+2 & 1+3 & 7+3 & 6+4 & 1+6 & 3+7 \\ 4+2 & 2+3 & 1+4 & 1+5 & 2+6 & 1+8 \\ 5+2 & 3+3 & 2+4 & 2+5 & 3+6 & 2+8 \\ 6+2 & 4+3 & 3+4 & 3+5 & 4+6 & 1+9 \end{array}$$

## 2. ՀԱՆԵԼ



43. Պարտէզում 3 խնձորի ծառ տնկեցին, 1 հատը չորացաւ: Քանի սը կանաչեց:

44. Դեղին վարդենին 3 վարդ էր տւել, իսկ կարմիրը՝ 2 պակաս: Կարմիր վարդենին ինչքան վարդ էր տւել:

45. Պարտէզում բացւած 3 մեխակներից թառամեցին 2 հատ: Ո՞րքան մնաց:

46. Նազաստակները 3 կաղամբից օրական 1 կաղամբ կերան: Առաջին օրը որքան մնաց, երկրորդ օրը որքան:

Օրինակներ.

$$\begin{array}{lll} 28. \quad 2-1 & 29. \quad 2-?=1 & 30. \quad 3-1 \\ 3-1 & 3-?=2 & 3-1-1 \\ 3-2 & 3-?=1 & 3-1-1-1 \end{array}$$

Իրաշըջան՝ խաղ ու զրուանք



47. Աշակերտներն զրուանքի ժամանակ 4 թիթեռնիկ բանեցին, սրանցից երեքը փախան: Ո՞րքան մնաց:

48. Ծիծեռնակի ընի մէջ 4 ձագ կար, 3 թուան գնացին: Քանի սը մնաց:

49. Աչքախփուկ խաղալիս Արփենիկը 4 երեխայ բռնեց,  
իսկ Աշոտիկը՝ 1 հոգի նրանից պակաս: Աշոտիկը քանի ե-  
րեխայ բռնեց:

50. Պահմտոցիկ խաղալիս Թագուշի տեղը 4 երեխաներ  
դտան, իսկ Պետրոսի տեղը գտնողները 2-ով պակաս եղան:  
Պետրոսի տեղը քանի երեխաներ դտան:

Օրինակներ.

31.

4—1      32. 4—?—3

4—3

4—2

4—2—1

4—?—2

4—?—1

4—1—1—2

4—3—1

Իրաշըջան՝ ընտանի կենդանիներ

Ճինգ

51. Աշխենց ոչխարը օրական 5 բաժակ կաթէ տա-  
մու. սրանից 2 բաժակ առաւօտայ թէյին են լցնում:  
Քանի բաժակ է մնում:

52. Գագիկենց այծը 5 բաժակ կաթէ տալիս, Շողի-  
կենցը՝ 2-ով պակաս: Շողիկենց այծը քանի բաժակ կաթէ  
տալիս:

53. Գոմում 5 հորթեր կային, 3-ը դուրս փախան: Այն-  
տեղ քանի հորթ մնաց:

54. Հաւերը 5 ձու էին ածել, ագռաւը 4 հատը դողա-  
ցաւ, կերաւ: Քանի ձու մնաց բնկալում:

Օրինակներ.

34.

5—1      35. 5—?—4

5—4

5—3

5—2

36. 5—1—4

5—?—2

5—?—1

5—2—1

ՎԵՅ

55. Գիւղացին 6 վառիկ ունէր, որոնցից 2 ծախեց:  
Ո՞րքան մնաց:

56. Պատի վրայ նստած 6 աղաւնիներից 4-ը թռան:  
Պատի վրայ որքան աղաւնի մնաց:

57. Կատուները հաւի 6 ձագերից 3-ը փախցրին: Ո՞ր-  
քան ձագ մնաց:

58. Շունը 6 հատ սև ու սպիտակ ձագեր հանեց: Ալ-  
բանցից 5-ը սև էին: Քանի սպիտակ էր:

Օրինակներ.

37.

6—1

6—3

6—5

6—4

6—2

38. 6—?—5

6—?—2

6—?—1

6—?—3

6—?—4

39. 6—2—3

6—1—3

6—2—2

6—5—1

6—2—2—1

ԵԶՐԸ

59. Քոթոթը հողի տակ 7 ոսկոր էր պահել՝ յետոյ ու-  
տելու համար. գամփուր սրանցից 2 կտոր գողացաւ, կե-  
րաւ: Փոսի մէջ քանի կտոր մնաց:

60. Կովը 7 բաժակ կաթ տւեց, բայց ոտքով ամա-  
նին զարկեց, 3 բաժակը թափեց: Քանի բաժակ կաթ  
մնաց:

61. Եօթը սագերից 4-ը արածում էին գետի ափին,  
մնացածները լողանում: Լողացող սագերը քանի հատ էին:

62. Հաւի տակը 7 ձու էին դրել: սրանցից 5 հատը  
բաղի ձւեր էին, մնացածները հաւի: Այդ ձւերից քանի  
ձուտ դուրս եկան:

## Օ ր ի ն ա կ ն ե ր.

40.	7—3	41.	7—?=1	42.	7—2—3
	7—4		7—?=5		7—6—1
	7—2		7—?=3		7—4—1
	7—5		7—?=2		7—1—2—3
	7—1		7—?=4		7—5—1

Իրաշընան՝ ժախքեր



63. Աշակերտն իր ունեցած 8 կոպէկից 3 կոպէկ տեսրակի տւեց: Մօտը քանի կոպէկ մնաց:

64. Թաղէուն 8 կոպէկ ունէր. այս փողից 3 կոպէկի տեսրակ առաւ, 1 կոպէկ էլ տեսրակի գնից աւելի վճարեց, մատիտ առաւ: Մօտը քանի կոպէկ մնաց:

65. Մարդարիտն իր ունեցած 8 կոպէկից 4 կոպէկի հաց առաւ: Մօտը քանի կոպէկ մնաց:

66. Մսի ֆունտը 8 կոպէկ արժէ, կարտոֆէլինը 2: Միսը կարտոֆէլից հրքանով աւելի թանդ է:

67. Գէորգը 8 կոպէկից 2 կոպէկի կանաչեղէն առաւ, 4 կոպէկ էլ աղի տւեց: Մօտը քանի կոպէկ մնաց:

68. Գուրգէնը իր ունեցած 8 կոպէկից 5 կոպէկի ձւեր առաւ, 3 կոպէկի էլ հաց: Մօտը քանի կոպէկ մնաց:

69. Ներսէսը իր 8 կոպէկից 2 կոպէկ ընկերին փոխ տւեց, 2 կոպէկի էլ գրչածայրեր առաւ: Մօտը քանի կոպէկ մնաց:

## Օ ր ի ն ա կ ն ե ր.

43.	8—4	44.	8—?=5	45.	8—2—2
	8—2		8—?=2		8—5—3
	8—6		8—?=1		8—1—5
	8—1		8—?=6		8—6—2
	8—5		8—?=4		8—1—1—4

8—3	8—?=3	8—3—3—2
8—7	8—?=7	8—4—2—2



70. Կօշկակարը 9 զոյգ կօշիկ տարաւ ծախելու, 2 զոյգը ծախեց: Մօտը քանի զոյգ կօշիկ մնաց:

71. Զկնավաճառը ձկի հատն առել էր 6 կոպէկով, իսկ ծախում էր 9 կոպէկով: Նա հատից քանի կոպէկ օգուտ էր ստանում:

72. Սբուր օրական 9 կոպէկ էր ճաշի տալիս, Սարգիսը՝ 4 կոպէկ պակաս: Մարգիսը քանի կոպէկ էր ճաշի տալիս:

73. Սուրէննեց տանն օրական 9 կոպէկի նաւթեն բանեցնում, իսկ իսանութեում՝ 5 կոպէկ պակաս: Խանութում օրական քանի կոպէկի նաւթեն բանեցնում:

74. Կազմարարը թւաբանութեան զիրքը 9 կոպէկով կազմեց, իսկ նկարչութեան տեսրը 4 կոպէկով պակաս: Նկարչութեան տեսրը նա քանի կոպէկով կազմեց:

75. Աշակերտուհին 9 կոպէկի թել անաւ ՀԱՅՀԻԿԹՐԿԴՐԱՅՐԱ, ասեղ: Նա թելին մըքան աւելի տւեց:

7/11. 1922

## Օ ր ի ն ա կ ն ե ր.

46.	9—5	47.	9—?=7	48.	պահանական կատար Ա. Գ. ՍԱՄԱՆՆԱԿԱՆ ԱՎԱՐԱՐ
	9—2		9—?=3		
	9—4		9—?=5		
	9—6		9—?=6		
	9—3		9—?=4		
	9—7		9—?=2		
					9—3—4

Իրաշընան՝ ժախտական



76. Գոհարիկը 10 տարեկան է, Սաթենիկը 8 տարեկան: Գոհարիկը քանի տարով աւելի մեծ է:

77. Պետրոսիկը 4 տարեկան է, նրա եղբայրը՝ 10։ Պետրոսիկը քմնի տարով աւելի փոքր է։

78. Նազարեանը դպրոց չեկաւ 10 օր, իսկ Սիսակեանը նրանից 3 օր պակաս բացակայութիւն ունեցաւ։ Սիսակեանը քմնի օր դպրոց չեկաւ։

79. Սեղբակեանը դասին 5 ըոսկէ ուշացաւ, Տըդատեանը՝ 10 ըոսկէ։ Տըդատեանը քմնի ըոսկէ աւելի ուշացաւ։

80. Հայկի մեծ եղբայրը գիշերը 6 ժամ քնեց, նրա փոքրիկ քոյրիկը՝ 10 ժամ. Քոյրիկը քմնի ժամ աւելի քնեց։

81. Հոխիսիկը գիշերը 10 ժամ քնեց, Պետիկը՝ 3 ժամ պակաս։ Պետիկը քմնի ժամ քնեց։

82. Գիւղացին գիւղից ոտով քաղաք եկաւ 10 ժամում, իսկ քաղաքացին՝ ձիով 2 ժամում։ Քաղաքացին քմնի ժամ առաջ տեղ հասաւ, եթէ նրանք միասին ճանապարհ ընկան։

### Օրինակներ.

49. 10—7	50. 10—?—5	51. 10—2—2
10—2	10—?—7	10—6—1
10—4	10—?—3	10—5—5
10—6	10—?—4	10—3—4
10—8	10—?—6	10—3—2
10—5	10—?—2	10—8—2
10—3	10—?—8	10—7—3

### ՅՈՒՄՍՐԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ

Իրաշրջան՝ ընտանիքում

83. Մի ընտանիքում 6 հոգի են. այնտեղ քմնի երեխայ կայ, եթէ բացի 2 ծնողներից 1 հատ էլ տատ է առում։

84. Փոքրիկ Արփիկի մկրտութեան ժամանակ տանն էին նրա հայրը, մայրը, քոյրն ու եղբայրը, կնքահայրը և սրանցից 2-ով պակաս հիւրեր։ Բոլորը քմնի հոգի էին։

85. Մի ընտանիքից 3 երեխայ դպրոց գնացին և նրանց հայրն էլ գործի գնաց։ Քմնի մարդ տանը մնաց, եթէ ընտանիքում 7 հոգի կայ։

86. Աննան 8 ընկերուհի հրաւիրեց, նրա Արուսեակ քոյրը՝ 6 պակաս։ Բոլոր հրաւիրւած հիւրերը որքան էին։

87. Սաթենիկը 2 տարեկան է, Սրամը Սաթենիկից 3 տարի մեծ է, նազիկը 2 տարի մեծ է Սրամից։ Նազիկը քմնի տարեկան է։

88. Մարիամը 8 տարեկան է, Վարդանը սրանից 2 տարի փոքր է, Մարթան Վարդանից 3 տարի փոքր է։ Քմնի տարեկան է Մարթան։

89. Տիգրանի ծնողները երեխաների համար գնեցին 1 շուն, 2 գեղձանիկ, 3 ոսկէձկնիկ և սրանցից 2-ով պակաս աղաւնի։ Բոլոր կենդանիները որքան էին։

90. Տիգրանի մօտ տօնին 9 հիւր եկան, որոնցից երկուսը շուտով գնացին, և 3 նոր հիւրեր եկան ու այս բոլորը ճաշի մնացին։ Հիւրերից քմնիսը ճաշի մնացին։

91. Արմենուհին իր տօնին նւէր ստացաւ 2 պատկեր, 1 գլւարկ, 3 ծաղկաման, սրանց թւից 4 պակաս տիկնիկներ Ո՞րքան բան ստացաւ նա։

Իրաշրջան՝ մեր ընտանի կենդանիները

92. Գիւղացին 7 կով ու 3 հորթ ունէր. 2 կով ծախեց։ Գոմում քմնի կենդանի մնաց։

93. Մի ուրիշ գիւղացի, որ 10 կով ունէր, 6 կով ծախեց և 4 կով նորից գնեց։ Հիմա նա քմնի կով ունեցաւ։

94. Մի կով առաւօտները 4 բաժակ կաթ էր տալիս, երեկոները 5 բաժակ. մի ուրիշ կով օրական 6 բաժակ էր տալիս։ Առաջին կովը քմնի բաժակ աւելի կաթ էր տալիս։

95. Թուխսը 6 հաւի ծուտեր և 4 բաժիկ հանեց, այս բոլոր ծաղերից 3 հատը կատուն փախցրեց։ Քմնի ծաղ մնաց։

96. Տանտիկնոց հաւերը մի օրում 8 ձու ածեցին, սրանցից նա 5 ձու բանեցրեց. միւս օրն էլ հաւերը 7 ձու ածեցին: Տանտիկինը վերջը քանի ձու ունեցաւ:

97. Երկու մեծ բաղեր 8 բաղիկ մանածելու տարան. 1 մեծ բար և 3 բաղիկ գետը մտան լողանալու, իսկ միւս ները գետափում մնացին: Ո՞րքան բար կար գետի մէջ և ո՞րքան գետափում:

98. Երբ որ կտորին նստած 6 աղաւնիների մօտ 4 աղաւնի էլ եկան, նստածներից 3 թռան: Վերջը քանի աղաւնի մնաց:

99. Ծառի վրայ կանգնած էին 8 ծիտեր. սրանցից 6 թռան, և 4 ուրիշ ծիտեր եկան: Վերջը ծառի վրայ քանի ծիտ մնաց:

100. Նապաստակը առաջ 4, յետոյ 6 ձագ հանեց: Արծիւը սրանցից 3 հատը փախցրեց, ագռաւը՝ 2 հատը: Նապաստակի ձագերից քանիսը մնացին:

Ի՞ւաշըջան՝ տուն ու դպրոց

$$4. \text{ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ} \quad \begin{array}{c} \bullet \bullet \\ \bullet \bullet \end{array} \times \begin{array}{c} \bullet \\ \bullet \end{array} = \begin{array}{c} \bullet \bullet \bullet \bullet \\ \bullet \bullet \bullet \bullet \\ \bullet \bullet \bullet \bullet \end{array}$$

101. Մի թերթ թուղթը 1 կոպէկ արժէ: Ո՞րքան արժեն 3 թերթերը:

102. Մի մատիտը 2 կոպէկ արժէ: Ո՞րքան արժեն 2 մատիտները:

103. Մի տետրակը 3 կոպէկ արժէ: Ո՞րքան արժեն 2 տետրակները:

104. Մի գրչակոթը 2 կոպէկ արժէ: Ո՞րքան արժեն 3 գրչակոթները:

105. Մի զոյտ սետինը 5 կոպէկ արժէ: Ո՞րքան պէտք է վճարել 2 զոյտին:

106. Մի զոյտ պատկերն արժէ 4 կոպէկ: Ո՞րքան պէտք է վճարել 2 զոյտին:

107. Մի կտոր ներկին վճարում են 2 կոպէկ: Ո՞րքան վճարեցին 5 կտորին:

108. Զեռարւեստի կափի մէկ գրւանքան արժէ 5 կոպէկ: Ո՞րքան արժէ 2 գրւանքան:

109. Մի զոյտ ձուն արժէ 3 կոպէկ: Ո՞րքան արժէ 3 զոյտը:

110. Մի արշին ժապաւէնն արժէ 4 կոպէկ: Քանի արշինին են վճարել 8 կոպէկ \*):

111. Մի կոճակը 2 կոպէկով են տալիս: Քանի կոճակ կարելի է առնել 10 կոպէկի:

112. Մի կոճ թելը արժէ 4 կոպէկ: Ո՞րքան արժեն 2 կոճերը:

113. Կաթի մի բաժակը 5 կոպէկով են ծախում: Քանի բաժակ կտան 10 կոպէկի:

114. 3 ասեղները 2 կոպէկ արժեն: Ո՞րքան ասեղ կարելի է գնել 4 կոպէկի:

115. 5 հատ քորոցը 4 կոպէկ արժէ: Ո՞րքան քորոց կարելի է գնել 8 կոպէկի:

116. Տիգրանն ասաց. հացի տւածս փողի կէսը 5 կոպէկ է: Քանի կոպէկ եմ հացի տւել: Ո՞վ կասէ:

117. Մինասն ասաց. պանըի տւածս փողի կէսը 4 կոպէկ է: Քանի կոպէկ եմ պանըի տւել: Ո՞վ կասէ:

118. Սալթենիկն ասաց. կանաչեղէնի տւածս փողի կէսը 3 կոպէկ էր: Քանի կոպէկ եմ տւել կանաչեղէնի:


119. Լոբիայի գրւանքան 2 կոպէկ արժէ: Քանի գրւանքին 10 կոպէկ են վճարել:

52.	$1 \times 1$	53.	$2 \times 1$	54.	$? \times 1 = 2$	55.	$1 \times ? = 3$	56.	$3 = ? \times 1$
	$1 \times 2$		$2 \times 2$		$? \times 2 = 4$		$1 \times ? = 5$		$4 = ? \times 2$
	$1 \times 3$		$2 \times 3$		$? \times 3 = 6$		$2 \times ? = 6$		$6 = ? \times 3$
	$1 \times 4$		$2 \times 4$		$? \times 5 = 10$		$2 \times ? = 8$		$10 = ? \times 5$

\*) Այս և սրա նման խնդիրները պէտք է լուծել  $? \times 4 = 8$  ուրինակի ձևով, ուրեմն իբրև բազմապատկման և ոչ թէ բաժանման խնդիր:

$1 \times 5$	$2 \times 5$	$? \times 3 = 9$	$3 \times ? = 6$	$10 = ? \times 2$
$1 \times 6$	$3 \times 3$	$? \times 1 = 8$	$3 \times ? = 9$	
$1 \times 7$	$3 \times 2$	$? \times 7 = 1$	$5 \times ? = 10$	
$1 \times 8$	$4 \times 1$	$? \times 1 = 6$		
$1 \times 9$	$4 \times 2$			
$1 \times 10$	$5 \times 1$			
	$5 \times 2$			
	$10 \times 1$			

## 5. ԲԱԺԱՆԵԼ, ԶԱՓԵԼ



Իրաշրջան՝ պարտէզում՝ եւ քանջարանոցում՝

120. Երկու երեխաներ 4 ծաղիկքաղեցին և հաւասար չափով իրանց մէջ բաժանեցին: Ամեն մէկը քանի ծաղիկ ստացաւ:

121. Ծառի վրայ հասած բոլոր 6 տանձերը քաղեցին 3 տղջիկներ և իրանց մէջ հաւասար չափով բաժանեցին: Ամեն մէկը հրքան ստացաւ:

122. Տիգրանի հայրը 6 ծառ բերեց պարտէզում տընկելու համար և հաւասար բաժանեց Տիգրանի ու սրա քրոջ մէջ: Ամին մէկը տնկելու քանի ծառ ստացաւ:

123. Երկու հաւասար տուփերի մէջ տեղաւորեցին 10 ընկոյզ: Ամեն մէկում հրքան ընկոյզ տեղաւորեցին:

124. Ծաղկի 5 մարդերի համար 10 սայլ սև հող բերին ու հաւասար չափով բաժանեցին: Ամեն մի մարդում քանի սայլ հող թափեցին:

125. Լուսիկն իր փոքրիկ մարդի 3 շարքերում 9 հատ ծաղկի սերմեր հաւասար չափով ցանեց: Քանի սերմ ընկաւ ամեն մի շարքին:

126. Բարտի ծառի բարձրութիւնը 10 արշին է, իսկ ծիրանի ծառինը նրա կիսու չափ է: Քանի արշին բարձրութիւն ունի ծիրանի ծառը:

127. Վարունդի մարդի երկարութիւնը 8 ոտնաչափ է, իսկ կաղամբինը 2 անգամ պակաս է: Քանի ոտնաչափ է կաղամբի մարդի երկարութիւնը:

128. Մի մարդում 9 հատ լորիայ կար ցանւած, իսկ միւսում 3 անգամ պակաս էր: Քանի շարք լորիայ կար միւս մարդում:

129. Քանջարանոցում 2 օրում 10 ֆունտ սիսեռ ցանեցին: Քանի ֆունտ ցանեցին մի օրում:

130. Քանջարանոցում 3 օրում 9 ֆունտ կարտոֆէլ ցանեցին: Քանի ֆունտ ցանեցին 1 օրում:

131. Արշակն ունէր 2 տիկլ: Քանի անգամ աւելի պէտք է ունենար, որ 10 հատ լինէր:

132. Պետրոսը քաղել էր 3 խնձոր: Քանի անգամ աւելի պէտք է քաղէր, որ 9 խնձոր ունենար:

133. Ռուզիկը 8 վարդերից մի փունջ պիտի շինէր. Նա քանի զոյզ վարդ պէտք է քաղէր:

134. Տօնածառից պէտք է կախէին 10 ոսկէլնկոյզ: Քանի զոյզ ընկոյզ պէտք էր:

135. Արմենուհին 6 մանիշակներից մի փնջիկ պիտի կապէր: Նա քանի զոյզ մանիշակ պիտի քաղէր:

136. Քանջարանոցից օրական 3 գրւանքայ կարտոֆէլ էին հանում կերակրի համար: Քանի օրում 9 գրւանքայ հանեցին:

137. Ծառից օրական 2 գրւանքայ խնձոր էին քաղում: Քանի օրում 8 գրւանքայ քաղեցին:

138. Արուսեակը 5 վարդերը 2 քոյրերի մէջ 2-ական բաժանեց: Իրան քանի հատ մնաց:

139. Թաղէսուը 7 տիկլը 3 եղբայրների մէջ հաւասար չափով բաժանեց: Եթէ իրան 1 հատ մնաց, եղբայրներից ամեն մէկին քանի տիկլ էր աւել:

140. Գաղիկը 9 սալորը 4 երեխայի մէջ 2-ական բաժանեց: Իրան հրքան սալոր մնաց:

141. Հոփիփսիմէն 10 տանձ ունէր, նա այս տանձերը 3 երեխաների մէջ 3-ական բաժանեց: Իրան քանի տանձ մնաց:

57. 1 : 1	58. 7 : 1	59. 4 : 2	60. 9 : 2	61. 7 : 3
2 : 1	8 : 1	5 : 2	10 : 2	8 : 3
3 : 1	9 : 1	6 : 2	3 : 3	9 : 3
4 : 1	10 : 1	7 : 2	4 : 3	10 : 3
5 : 1	2 : 2	8 : 2	5 : 3	4 : 4
6 : 1	3 : 2		6 : 3	5 : 4
62. 6 : 4	63. 5 : 5	64. 9 : 5	65. 9 : 6	66. 10 : 7
7 : 4	6 : 5	10 : 5	10 : 6	8 : 8
8 : 4	7 : 5	6 : 6	7 : 7	9 : 8
9 : 4	8 : 5	7 : 6	8 : 7	10 : 8
10 : 4		8 : 6	9 : 7	9 : 9
				10 : 9

Իրաշըջան՝ դպրոցում

## 6. ԲԱՇՄԱՊԱՏԿԵԼ ԵՒ ԲԱԺԱՆԵԼ

142. Դասարանի պատերից կախելու համար առաջին օրը 2 պատկեր բերին, իսկ երկրորդ օրը՝ 3 անգամ աւելի: Եթէ պատկերները հաւասար չափով 3 պատերից կախեցին, ուրեմն ամեն մի պատից որքան կախեցին:

143. Դպրոցում առաջին օրը 3 նոր աշակերտներ ընդունեցին, իսկ երկրորդ օրը՝ 2 անգամ աւելի: Այդ աշակերտներին երկու-երկու նստեցրին նստարանների վրայ: Քանի նստարանի վրայ նրանք տեղ բռնեցին:

144. Զեռարւեստի համար մի օր 2 գրւանքայ կաւ բերին, միւս օրը՝ 2 անգամ աւելի և բաժանեցին 2 դասարանների մէջ հաւասար չափով: Ամեն մի դասարանի որքան կաւ հասաւ:

145. Դասարանի 2 չքաւոր աշակերտների համար

4 անգամ երկու-երկու գրչածայրեր բերին ու հաւասար բաժանեցին: Ամեն մէկը որքան գրչածայր ստացաւ:

146. Դասարանում կենդանիների 10 հատ պատկեր կայ. դրանցից 5 անգամ պակաս բոյսերի պատկերներ կան, իսկ բոյսերի պատկերներից 3 անգամ աւելի տների պատկերներ կան: Վերջին տեսակից քանի պատկեր կայ դասարանում:

147. Գրիգորը մի ամսում 8 պատկեր նկարեց. Պետրոսը նրանից 4 անգամ պակաս նկարեց, իսկ Աւետիսը Պետրոսից 3 անգամ աւելի նկարեց: Քանի պատկեր նկարեց Պետրոսը:

148. Գոհարիկը մի շաբաթում 6 արշին ժանեակ (հաշիա) գործեց. Զանիկը նրանից 2 անգամ պակաս գործեց, իսկ Նազիկը Զանիկից 3 անգամ աւելի գործեց: Նազիկը քանի արշին ժանեակ գործեց:

149. Գուրգէնը մի օրում 10 կաւէ կենդանի շինեց. Ռուբէնը 5 անգամ նրանից պակաս շինեց, իսկ Գեղամը Ռուբէնից 2 անգամ աւելի շինեց: Գեղամը որքան կաւէ կենդանի շինեց:

150. Աստղիկը մի օրում 5 տող դաս արտագրեց. Թագուհին նրանից 2 անգամ աւելի արտագրեց, իսկ Անահիտը 10 անգամ Թագուհուց պակաս արտագրեց: Անահիտը քանի տող արտագրեց:

151. Ստեփանը մի օրում 4 խնդիր լուծեց. Արմենակը նրանից 2 անգամ պակաս լուծեց, իսկ Արգարը Արմենակից 5 անգամ աւելի լուծեց: Արգարը քանի խնդիր լուծեց:

152. Առաջին օրը դպրոցի համար 3 գրւանքայ թանաք բերին, երկրորդ օրը սրանից 2 անգամ աւելի և բոլորը հաւասար չափով բաժանեցին 3 դասարանների մէջ: Ամեն մի դասարանի որքան թանաք հասաւ:

153. Աշխէնը մի օրում 8 երես հէքիաթ կարդաց. Սաթենիկը նրանից 4 անգամ պակաս կարդաց, իսկ Սօ-

ֆիկը Սաթենիկից 5 անդամ աւելի կարդաց: Աօֆիկը քանի երես հէքիաթ կարդաց:

154. Քանի տող անդիր արեց Արամը 4 բոպէում, եթէ նա 5 բոպէում 10 տող է անդիր անում:

155. Եթէ Գաղիկը 9 բոպէում 3 տող է արտագրում, որքան կարտագը նա 2 բոպէում:

156. Լուսաբերը մի ժամում 2 արշին ժանեակ է գործում, նրա քոյրը Հոփիսիմէն նրանից 2 անդամ աւելի արագ է գործում: Քանի ժամում Հոփիսիմէն 8 արշին ժանեակը գործէ:

157. Եթէ Պետրոսը 8 մատիտը 4 շաբաթում է բանեցնում, որքան ժամանակ կը բանեցնէ նա 10 մատիտը:

158. Սահակն ասաց. եթէ իմ ներկերիս կէսը 3 անդամ շատացնենք, ես 9 հատ ներկ կունենամ: Նա քանի հատ ներկ ունէր:

159. Աշոտը 10 մատիտ առաւ և կէսը տւեց Գաղիկ ընկերին 2-ական կոպէկով: Գաղիկից նա քանի կոպէկ ստացաւ:

160. Սարգիսը 6 գրչակոթ առաւ և կէսը տւեց Վաղպարշակին 3-ական կոպէկով: Քանի կոպէկ ստացաւ Սարգիսը Վաղպարշակից:

### Օրինակներ

67. $4 \times 2 : 2$	68. $8 : 4 \times 3$	69. $10 : 5 \times 2$
$2 \times 3 : 3$	$3 \times 3 : 3$	$5 \times 2 \times 10$
$10 : 5 \times 3$	$8 : 4 \times 5$	$6 : 2 \times 3$
$4 : 2 \times 5$	$2 \times 4 : 2$	$4 : 4 \times 2$

7. ԲՈՂՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՐԸ 10-ի ԹԻԱԿԱՐԳՈՒՄ

Զանազան իրաշրջաններ

161. Երկու գիւղացիներ անտառում առաջին օրը 7 ծառ կտրեցին, իսկ երկրորդ օրը 3 ծառ և յետոյ իրանց

մէջ հաւասար չափով բաժանեցին: Ամեն մէկը քանի ծառ ստացաւ:

162. Երեք երեխաներ անտառում առաջ 1 մանիշակ գտան, յետոյ 4, վերջն էլ 3 մանիշակ ու յետոյ հաւասար չափով իրանց մէջ բաժանեցին: Երեխաներից ամեն մէկը քանի մանիշակ ստացաւ:

163. Մի որսորդ 2 անգամ որսի գնաց և ամեն անգամ 3-ական նապաստակ բերեց, միւս որսորդը 2 անգամ գնաց և 2-ական նապաստակ բերեց: Երկուսը միասին քանի նապաստակ բերին:

164. Գիւղացիները առաջին օրը 3 անգամ անտառ գնացին և ամեն անգամ 3-ական սայլ փայտ բերին, իսկ երկրորդ օրը 2 անգամ անտառ գնացին և ամեն անգամ 3-ական սայլ փայտ բերին: Ո՞րքան փայտ պակաս բերին նրանք երկրորդ օրը:

165. Աղջիկները մի օր 2 անգամ անտառ գնացին և իւրաքանչիւր անգամ 5 կապոց ծառի ճիւղեր բերին, միւս օրը 3 անգամ գնացին և իւրաքանչիւր անգամ 2 կապոց բերին: Առաջին անգամի բերածը որքան աւելի է երկրորդ անգամւանից:

166. Սուրէնը անտառում 9 հատ տիփի գտաւ ու 3 հաւասար բաժին արեց, երեք բաժնից մէկը տւեց իր քըոջը, 2 հատ էլ ընկերին: Նրա մօտ քանի տիփի մնաց:

167. Գիւղացին իր ունեցած 9 եզներից 3-ը արածելու ուղարկեց, իսկ մնացածներին լծեց: Նա քանի լուծ եղ լծեց:

168. Վարդենու վրայ առաջին անգամ 2 մեղու եկան, երկրորդ անգամ 3 մեղու, յետոյ, երբ սրանք 2 անգամ աւելացան, 6 մեղու թռան հեռացան: Վարդենու վրայ քանի մեղու մնաց:

169. Ծառի վրայ 9 հատ թրթուր կար, սրանցից 3-ին ձնձղուկը որսաց, մնացածի կէսը սարեակը որսաց: Վերջը քանի թրթուր կենդանի մնաց:

170. Հաւերն օրական 3 ձու էին ածում, սրանցից օրա-

կան 2 հատ բանեցնում էին: Ո՞րքան ձու մնաց 3 օր յետոյ:

171. Աշակերտը 2 հատ 5 կոպէկանոց տեսրակները փոխեց մի պատկերի հետ, որ 7 կոպէկ արժէր: Քանի կոպէկ էլ նա պէտք է յետ ստանար:

172. Սեղրաքը 8 կոպէկի 2 պատկեր առաւ, բայց տարաւ յետ տւեց ու դրանց տեղը գրչածայրեր առաւ, որոնց հատը պատկերից 3 կոպէկ պակաս արժէր: Նա քանի գրչածայր առաւ:

173. Գեղամը տօնածառի համար 6 կոպէկի 3 թղթէ թուչուններ գնեց; յետոյ էլ՝ 2 թղթէ կենդանիներ գնեց: Ի՞նչ վճարեց նա այս թղթէ կենդանիներին, եթէ ամեն մի թղթէ կենդանի 3 կոպէկ առելի թանգ արժէր:

174. Վահանը իր ներկերը փոխեց Տիգրանի գունաւոր մատիանների հետ, Տիգրանը Վահանին տւեց 5 մատիտ, որի հատը 2 կոպէկ արժէր, իսկ Վահանը տւեց նրան մի քանի ներկ, որոնց հատը 5 կոպէկ արժէր: Քանի ներկ տւեց Վահանինը:

175. Ղուկասին մայրը 4 օր 2-ական կոպէկ հացի փող էր տւել. նա այս փողից 2 կոպէկի թուղթ առաւ, մնացած փողից էլ 3 վրձին առաւ: Քանի վրձին առաւ Ղուկասը:

176. Դպրոցի համար առած 10 ֆունտ թանաքից 2 ֆունտը թափեց. մնացածը, ամսական 2 ֆունտ բանեց-նելով՝ մի քանի ամսում վերջացրին: Քանի ամիս բանեց-ըին մնացածը:

177. Վարդգէսը իր տեսրակում 6 նկար էր արել, Գուրգէնը նրանից 2 անգամ պակաս էր նկարել, իսկ Սահակը Գուրգէնից 4 նկար առելի էր արել: Սահակը քանի նկար էր արել:

178. Երկու ընկերներ միասին 9 ընկոյզ գնեցին. նրանցից մէկը 3 ընկոյզ պակաս ստացաւ: Քանի ընկոյզ ստացաւ: Ո՞րքան խնձոր ստացաւ ամեն մէկը:

179. Երեք աղջիկներ միասին 10 խնձոր առան և այն-

ալէս բաժանեցին, որ նրանցից մէկը 1 խնձոր առելի ստացաւ: Ո՞րքան խնձոր ստացաւ ամեն մէկը:

180. Գրիգորէնք 4 հաւ ունին, իսկ Պետրոսէնք 2 անգամ առելի ունին: Պետրոսէնք քանի հաւ առելի ունին:

181. Գուրգէնը 3 նոր գրչածայրեր ունէր և սրանցից 6 առելի՝ հին գրչածայրեր: Քանի անգամ առելի էին նրանքին գրչածայրերը:

182. Սահակը 4 գրւանքայ կաւ ունէր, նա ամեն մի գրւանքից 2 փոքրիկ կենդանի շինեց. նա այդ շինածներից 3 հատը քրոջը տւեց, 2 հատն էլ՝ եղբօրը. Քանի հատ մնաց իր մօտը:

183. Կօշկակարը 9 զոյգ կօշիկ կարեց. առաջին օրը ծախսեց 3 մասից մէկը, երկրորդ օրը մնացածի կէսը: Քանի զոյգ կօշիկ մնաց մօտը:

184. Անիւ շինողը 9 հատ անիւ էր շինել. սրանցից 3 զոյգ առաջ ծախսեց, յետոյ էլ 1 զոյգ: Մօտը քանի հատ մնաց:

185. Պղնձգործը 9 գրւանքայ գեղին պղնձից (արոյրից) 3 գրւանքանոց 2 հատ զանգակ շինեց. մնացածից էլ գրւանքանոց մոմակալներ շինեց: Քանի մոմակալ շինեց նա:

186. Պղնձգործը մի օր 7 գրւանքայ հին պղնձեղէն բաներ առաւ, իսկ միւս օրը՝ 3 գրւանքայ. նա այս բոլորը հալեց և սրանց մի մասից 4 հատ 2 գրւանքանոց զանգակ շինեց: Քանի գրւանքայ պղինձ մնաց մօտը:

187. Դարբինը 9 գրւանքանոց մի կտոր երկաթ առաւ, նա այս երկաթը 3 հաւասար մաս արեց. մի մասից 1 ուրագ շինեց, իսկ մնացածի կիսից 2 շղթայ շինեց: Շղթաները քանի գրւանքանոց էին: Մօտը քանի գրւանքայ երկաթ մնաց:

70. 3+2	71. 4×2	72. 2×3+1	73. 3×3—8	74. 2+3×2*)
3—2	4 : 2	4×2+2	5×2—6	6+2×2
3×2	6+3	3×3+1	2×4—5	7+1×1

\*) Պէտք է միշտ առաջ  $\times$  և : նշաններով գործողութիւնները կատարել:

3 : 2	6 : 3	2×2+4	6×1—4	1+2×4
5+2	6 : 3	1×5+3	2×2—2	3+2×3
5—2	10 : 7	3×2+2	3×2—3	9—1×5
5×2	10 : 7	2×2+6	4×2—6	8—4×2
4+2	3+3	1×1+7	2×5—8	10—3×3
4—2	3—3	2×4+1	1×9—4	7—4×1
6—2	3×3	3×1+5	8×1—7	6—2×2
<b>75.</b> 8 : 4	<b>76.</b> 2×3 : 6	<b>77.</b> 8 : 4+5	<b>78.</b> 8 : 2—4	<b>79.</b> 6+8 : 4
8—4	1×8 : 2	6 : 3+8	9 : 3—2	7+6 : 2
6 : 3	3×3 : 9	10 : 2+3	10 : 5—1	6+3 : 3
6+3	2×5 : 3	9 : 3+7	7 : 1—5	5+10 : 5
6—3	4×2 : 5	7 : 1+2	10 : 2—3	4+9 : 3
7 : 2	6 : 2×3	6 : 3+2	8 : 1—6	9—4 : 2
7+2	10 : 5×4	8 : 2+5	6 : 2—3	10—9 : 3
7—2	8 : 4×5	9 : 3+6	9 : 1—7	7—8 : 2
9 : 5	9 : 3×2	5 : 5+4	4 : 2—1	6—4 : 4
9—5	5 : 5×8	8 : 4+3	8 : 2—3	5—10 : 2

## II. Գործողութիւններ զուտ տասնեակների թւակարգում

### 1. ԳՈՒՄԱՐԵԼ

Իրաշրջան՝ կենդանիներ

188. Գիւղացին 2 կով ունի. մէկը օրական 10 բաժակ կաթ է տալիս, միւսը՝ 20 բաժակ. Քանի բաժակ կաթ էն տալիս երկուսը միասին:

189. Աշխանց հաւերը մի շաբաթում 2 տասնեակ ձու ածեցին, Մարգարիտանցը՝ 3 տասնեակ. Այս երկու տների տան հաւերը մի շաբաթում քանի ձու ածեցին:

190. Հովիւը 10 եղ տարաւ արածեցնելու և սրանցից 30 աւելի կով. Քանի կենդանի տարաւ նա արածեցնելու:

191. Դաշտում արածում էին 30 այծեր և սրանցից 20 աւելի ոչխարներ: Քանի կենդանի էին արածում դաշտում:

192. Գիւղացին 10 ոչխար ծախելու ուղարկեց, 40 ոչխար սարն ուղարկեց, 20 ոչխար էլ տանը պահեց: Քանի ոչխար ունէր նա:

193. Տանտիկինը 1 տասնեակ ձու մի թխսի տակ դրեց, 1 տասնեակ միւս թխսի տակ, իր մօսն էլ մնաց 6 տասնեակ: Քանի ձու ունէր նա:

194. Աղաւնետան կտուրից 40 աղաւնիներ թռան, 30 աղաւնի կտուրի վրայ կեցան, իսկ 20 աղաւնի ներսը մնացին: Քանի աղաւնի ունէր աղաւնետան տէրը:

195. Գիւղացին 60 հատ սև այծեր ունէր, 30 հատ սպիտակ, 10 հատ էլ խատուտիկ: Ո՞րքան այծ ունէր նա:

196. Կտուրին կանգնած էին 70 մոխրագոյն, 10 սպիտակ և 20 խատուտիկ աղաւնիներ: Քանի հատ էին բոլորը:

197. Գիւղացու բաժերը 30 ձուտ հանեցին, սագերը՝ 20 ձուտ, հաւերը՝ սագերից 3 տասնեակ աւելի: Ո՞րքան ձուտ ունեցաւ գիւղացին:

198. Մեղւապահը փեթակների մօտ առաջին օրը 60 սատկած մեղու գտաւ, երկրորդ օրը նոր սատկած 20 մեղու գտաւ և երրորդ օրը՝ 10 մեղու: Ո՞րքան էին բոլոր սատկած մեղուները:

199. Ծառի վրայ թառել էին 80 ծիտեր. յետոյ 10 հատ էլ աւելացան, վերջը 10 հատ էլ եկան: Քանի ծիտ կար եկմա ծառի վրայ:

200. Հովիւը արօտատեղից գիւղ բերեց 20 եղ, եղներից 10 աւելի կով, կովերից 10 աւելի ոչխար: Ո՞րքան կենդանի նա գիւղ բերեց:

<b>80.</b> 20+10	<b>81.</b> 80+10	<b>82.</b> 50+30	<b>83.</b> 30+30	<b>84.</b> 50+20
80+20	20+30	20+80	10+40	60+30
40+30	60+40	40+60	30+60	20+50
20+60	90+10	30+10	40+10	10+50
10+70	40+20	70+20	60+20	10+90

85.	20+60+10	86.	20+10+70	87.	10+50+30
	30+30+20		30+40+30		20+10+60
	40+50+10		60+10+30		10+70+10
	80+10+10		40+10+40		30+10+40
	60+20+20		50+20+20		40+30+20

## 2. ՀԱՆԵԼ

Իրաշըջան՝ դպրոցում

201. Դասարանը 40 աշակերտ ունէր. սրանցից 10 հոգի բացակայ էին: Ո՞րքան աշակերտ էր նստած դասարանում:

202. Դասարանում 50 աշակերտներ կային. սրանցից 30 հոգի գիրք չէին բերել: Քմնի հոգի գիրք ունէր:

203. Դասարանի աջ կողմում նստած էին 30 աշակերտներ, ձախ կողմում՝ 20 աշակերտներ: Ո՞րքան պակաս էր ձախ կողմում նստածների թիւը:

204. Առաջին հիմնական ու զուգընթաց դասարաններում 90 աշակերտներ կային, իսկ երկրորդ դասարանում՝ 50 աշակերտներ: Ո՞րքան աւելի էր առաջին դասարանների աշակերտների թիւը:

205. Տղայոց դպրոցում 9 տասնեակ նստարան կար, աղջկանց դպրոցում՝ 7 տասնեակ: Քմնի նստարան պակաս կար աղջկանց դպրոցում:

206. Դպրոցի աղջիկներն 3 տասնեակ գիրք բաժանեցին, իսկ տղաներին՝ 7 տասնեակ: Քմնի գիրք տղաներն աւելի ստացան:

207. Դասարանի աղջիկները տարւայ մէջ ձեռագործի 60 դաս ունեցան, տղաները՝ ձեռարւեստի 40 դաս: Ձեռարւեստի դասեր մրգան պակաս ունեցան տղաները:

208. Աշակերտը 90 տող դաս պէտք է գրէր. նա առաջին օրը միայն 40 տող գրեց: Միւս օրւան քմնի տող մնաց:

209. Առաջին հիմնական դասարանում երեք ամսում 100 խնդիր լուծեցին, իսկ առաջին զուգընթաց դասարանում՝ 80 խնդիր: Ո՞րքան խնդիր աւելի լուծեցին հիմնական դասարանցիք:

210. Ընթերցանութեան 100 երեսնոց գրքից Գուրգէնը 30 երես արդէն կարգացել էր: Քմնի երես էր մնացել:

211. Արուսեակի գիրքը 90 երեսնոց էր. նա արդէն 20 երես կարգացել էր: Քմնի երես էր մնացել:

212. Ծնողական ժողովին աշակերտների հայրերից ու մայրերից դպրոց եկել էին 100 հոգի. Նրանցից առաջ 30 հոգի ստացան իրանց որդիների վկայականները, գնացին, յետոյ էլ՝ 40 հոգի: Քմնի ծնող մնաց վերջը:

213. Դպրոցի 90 աշակերտներից տարւայ վերջը 70 աշակերտ դասարանը փոխեցին, 10 աշակերտ դուրս գնացին: Քմնի աշակերտ դասարան չփոխեց և մնաց դպրոցում:

214. Դպրոցի համար թւարանութեան 10 տասնեակ տետրակ առան, նկարչութեան համար թւարանութեան տետրակներից 3 տասնեակ պակաս, իսկ ուսւաց լեզուի համար նկարչութեան տետրակներից 2 տասնեակ պակաս: Քմնի տետրակ առան ուսւաց լեզուի համար:

88.	20—10	89.	80—10	90.	40—10	91.	100—10	92.	60—10
	90—20		20—20		70—20		80—20		20—20
	80—30		70—30		30—30		90—30		100—40
	40—40		50—40		50—50		70—50		60—50
	70—60		60—60		100—60		90—70		80—70

93.	70—30—20	94.	100—10—90	95.	90—40—50
	90—10—60		50—20—29		60—10—40
	100—40—50		40—30—10		50—20+30
	80—30—40		70—40—10		100—60—30
	60—20—40		80—50—20		40—20—20

96.	97.	98.	99.	100.
10+?=20	50+?=100	30+?=60	40+?=90	20+?=90
20+?=40	60+?=80	50+?=70	70+?=90	70+?=100

$$\begin{array}{cccccc}
 40+?=60 & 40+?=70 & 50+?=90 & 20+?=100 & 40+?=100 \\
 40+?=80 & 80+?=100 & 30+?=70 & 30+?=80 & 10+?=100 \\
 50+?=70 & 70+?=90 & 20+?=80 & 10+?=90 & 30+?=100 \\
 & & & & 60+?=100 \\
 & & & & 20+?=100
 \end{array}$$

## 3. ԳՈՒՄԱՐԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ

Իլաշըան՝ բանջարանոցիմ եւ պարտէզում՝

215. Բանջարապանը առաջին օրը 30 կաղամբ ծախեց, իսկ երկրորդ օրը՝ 10 կաղամբ աւելի: Ո՞րքան մնաց 100 կաղամբից:

216. Բանջարապանը մի անգամ 60 փունջ կանաչեղին ծախեց, իսկ միւս անգամ՝ 40 փունջ պակաս: Քանի փունջ ծախեց նա:

217. Մի մարդում կաղամբի 60 շիթել էր տնկւած, իսկ միւսում՝ 20 շիթել պակաս: Ո՞րքան շիթել կար այս երկու մարդերում:

218. Մի մարդից թրթուրը լափել էր 20 շիթել, իսկ միւսից 30 աւելի: Ո՞րքան շիթել էր լափել թրթուրը այս երկու մարդերից: Ո՞րքան էր անվաս մնացել 90 շիթելից:

219. Մի մարդում ցանւած էր 50 հատ լոբիայ, միւսում՝ 10 լոբիայ աւելի, իսկ երրորդում 30 լոբիայ երկրորդից պակաս: Քանի լոբիայ էր ցանւած երրորդ մարդում:

220. Մի մարդում ցանւած 70 լոբիաներից 50-ը բռւսնեցին, իսկ միւս մարդում՝ 60-ից 40-ը բռւսնեցին: Ո՞րքան լոբիայ չբռւսնեց երկու մարդերում:

221. Կարտոֆէլի մի մարդի 30 շարքերից 20 շարք փորել հանել էին, միւս մարդի 40 շարքերից 10 շարք փորել հանել էին: Քանի շարք էր մնացել:

222. Պարտէզի երեք ծառուղիներում 100 ծառ աղնեցին. առաջին ծառուղիում 50 ծառ տնկեցին, երկրորդիցին.

գում 20 ծառ պակաս առաջինից: Քանի ծառ տնկեցին երրորդ ծառուղիում:

223. Պարտէզի երեք ծառուղիների 60 ծառերից, առաջին ծառուղիում՝ չորսացան 20 ծառ, իսկ երկրորդ ծառուղիում՝ 80 ծառերից 30 ծառ: Երկու ծառուղիներում քանի ծառ բռնեց:

224. Խնձորենու 10 տասնեակ պտուղներից որթերը փչացրել էին 5 տասնեակ, իսկ տասնձենու 6 տասնեակ պտուղներից՝ 2 տասնեակ: Քանի հատ տասնձ ու խնձոր անվաս մնաց:

225. Պարտիզապանը մի օր իր խնձորենիներից 9 տասնեակ հասած պտուղ քաղեց, տասնձենիներից 5 տասնեակ պակաս, իսկ սալոր քաղեց տասնձերից 4 տասնեակ աւելի: Ո՞րքան սալոր քաղեց նա:

226. Քամին նոր տնկած կեռասենիներից արմատահան արեց 30 հատ, նշենիներից 10 հատ պակաս: Քանի նոր ծառ քամին արմատահան էր արել:

227. Պարտէզի պատերը շինելու համար առաջին օրը 40 սալլ քար կրեցին, երկրորդ օրը առաջին օրւանից 20 սալլ պակաս: Քանի սալլ էր պէտք բոլոր պատերի համար, եթէ 30 սալլ էլ պակասում էր:

228. Քաղաքային պարտէզի համար առաջին օրը 30 սալլ սկահող կրեցին, երկրորդ օրը առաջին օրւանից 10 սալլ աւելի, երրորդ օրը երկրորդ օրւանից 20 սալլ պակաս: Ո՞րքան սալլ եղաւ բոլոր կրած հողը:

101. 10+60—30	102. 100—80+70	103. 50—40+90
20+40—50	10+70—50	40+60—80
80—60+70	20+60—40	60+10+50
30+50—40	90—50+10	30+70—90
100—70+10	30+40—60	70—50+70
40+30—20	80—10+30	20+80—60
90—20+30	40+50—90	80—50+30
50—30+80	50—20+60	10+80—90

60+40=80	70-30+40	90-60+30
70-10+40	60-40+80	100-50+40
<b>104.</b> 20+30+10-40	<b>105.</b> 70-30+40-60	
40-20+70-10	50+40-10-20	
30+50-60+80	100-70+60-90	
60-40+80-100	80-50+70-80	
10+20+60-50	90-30-40+80	

**4. ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ**

Իրաշըան՝ դպրոցում՝ եւ լնտանիքում՝

**229.** Մի տասնեակ ձռւն 20 կոպէկ արժէ։ Ո՞րքան արժէ 3 տասնեակը։

**230.** Մի տասնեակ խնձորը 30 կոպէկով են ծախում։ Ո՞րքան պէտք է վճարել 2 տասնեակին։

**231.** Տասը բաժակ կաթը տալիս են 40 կոպէկով։ Ո՞րքան պէտք է վճարել 20 բաժակ կաթին։

**232.** Մի ընտանիք մի տասնեակ կապոց կանաչեղէնը 30 կոպէկի հաշւով էր գնել խանութպանից։ այդ ընտանիքը մինչև ամսի վերջը 3 տասնեակ էր բանեցրել։ Ո՞րքան փող պէտք է ստանար խանութպանը։

**233.** Տասը արշինանոց ժապաւէնը 20 կոպէկ արժէ։ ի՞նչ արժէ 50 արշին ժապաւէնը։

**234.** Արշակին 10 օրւայ համար 30 կոպէկ բլիթի փող են տալիս։ նա մի ամսում քանի կոպէկ է ստանում բլիթի համար։

**235.** Սաթենիկենց տանը մի ամսում 10 կոպէկի գլրչածայրեր են բանեցնում։ Ո՞րքան փող պէտք է նրանք գրչ տան 10 ամսում։

**236.** Պետրոսենց տանը մի ամսում 20 կոպէկի թանաք են բանեցնում։ Ո՞րքան փող են տալիս նրանք թանաքի 5 ամսում։

**237.** Գագիկը մի շաբաթում 20 խնդիր է լուծում։ քանի խնդիր է նա լուծում 4 շաբաթում։

**238.** Աստղիկը մի շաբաթում 10 երես դաս է արտադրում։ Ո՞րքան երես նա կարտազը է 9 շաբաթում։

**239.** Արմենակը մի ըովէում 10 տառ է գրում։ Ո՞րքան տառ նա կը գրէ 8 ըովէում։

**240.** Արփենիկը մի ժամում 20 տող է արտադրում գրքից։ քանի տող նա կարտազը է 3 ժամում։

**106.**  $10 \times 2$

$10 \times 8$

$10 \times 3$

$10 \times 5$

$10 \times 6$

$10 \times 9$

$10 \times 10$

$10 \times 4$

$10 \times 7$

$20 \times 3$

$20 \times 5$

**107.**  $20 \times 2$

$20 \times 4$

$30 \times 3$

$30 \times 2$

$40 \times 2$

$50 \times 2$

$2 \times 50$

$2 \times 40$

$3 \times 30$

$4 \times 20$

$2 \times 20$

**108.**  $5 \times 20$

$3 \times 20$

$7 \times 10$

$4 \times 10$

$10 \times 10$

$9 \times 10$

$6 \times 10$

$5 \times 10$

$3 \times 10$

$8 \times 10$

$2 \times 10$

**5. ԲԱԺԱՆԵԼ, ԶԱՓԵԼ**

Իրաշըան՝ արհեստանոցներում՝

**241.** Ատաղձագործը սեղանի 20 ոտք էր շինել։ քանի սեղանի համար էր այսքանը։

**242.** Ատաղձագործը աթոռի 60 ոտք էր շինել։ քանի աթոռի համար էր այսքանը։

**243.** Անիւ շինողը 80 անիւ շինեց։ քանի կառքի համար բաւական կը լինէր այսքանը։

446. Դաշտում ցանած կայ 90 արտ. արտերի կէս մասում գարի է ցանած, մի վեցերորդ մասում՝ հաճար, մի հինգերորդ մասում՝ կտաւատ, իսկ մնացած արտերում ցորեն: Ցորենի քանի արտ կայ:

447. Երեք ամբարներում 92 փուլթ ցորեն կայ. Երրորդում երկրորդից 15 փուլթ աւելի կայ, իսկ երկրորդում առաջինից 3 անգամ աւելի կայ: Ո՞րքան ցորեն կայ իւրաքանչիւր ամբարում:

#### ը. Դպրոցում

448. Զորս դաստա թղթից ուսուցիչը աշակերտների համար 5 թերթանոց 17 տետրակ կարեց: Քանի թերթ թուղթ մնաց նրա մօտ:

449. Առաջին դասարանում 48 աշակերտ կայ, երկրորդում՝ 35, իսկ երրորդում՝ 12: Քանի նստարան պէտք է զնել այս բոլոր դասարաններում, առաջին դասարանցիներին 8-ական հոգի նստեցնելով իւրաքանչիւր նստարանին, երկրորդ դասարանցիներին՝ 7-ական հոգի, իսկ երրորդ դասարանցիներին՝ 6-ական հոգի:

450. Աշակերտը 5 գիրք կազմելու աւեց. կազմարարը 12-ական կոպէկ առաւ, իսկ միւսների համար՝ 16-ական կոպէկ: Ո՞րքան արժէ բոլոր գրքերի կազմը:

451. Գիրքը 95 երես ունի: Երեխան առաջին երկու օրերում 8-ական երես կարդաց, միւս երկու օրերում 12 ական երես, իսկ մնացածը նա կարդաց 5 օրում հաւասար

չափով: Մնացած օրերում քանի ական երես կարդաց նա:

452. Պահարանում 72 գիրք կայ: Նոր գրքերը հներից 14 հատ աւելի են: Ո՞րքան են հին գրքերը:

453. Աշակերտուհին 70 կոպէկի դասական պիտոյքներ գնեց. Յ դաստա թուղթ դաստան 15-ական կոպէկով, մի գրչակոթ՝ 10 կոպէկով և մի քանի մատիտ՝ 5-ական կոպէկով: Քանի մատիտ գնեց նա:

454. Գիրքը 72 թուղթ ունի: Երեխան առաջին օրը կարդաց գրքի մի վեցերորդ մասը, երկրորդ օրը բոլոր մնացածի քառորդը: Քանի թուղթ մնաց գրքից կարդալու:

455. Դպրոցի առաջին պատրաստականում 42 աշակերտ կար. Երկրորդում 13 աշակերտ առաջին պատրաստականից պակաս կար, իսկ երրորդ պատրաստականում երկրորդից 18 աշակերտ աւելի կար: Քանի աշակերտ կար երրորդ պատրաստականում:

456. Աշակերտուհին գրքից 14 տող արտագրեց, որոնց իւրաքանչուրում 6-ական բառ կար. այդ բառերի եօթերորդ մասը նա սիսալ արտագրեց: Աշակերտուհին քանի բառ սիսալ արտագրեց:

457. Դպրոցում 85 երեխաներ կային. Երբ որ 11 տղաներ էլ եկան, այն ժամանակ աղաների թիւը աղջիկների թիւը 5 անգամ աւելի եղաւ: Քանի աղջիկ կար դպրոցում:

458. Կազմարարին 2 տետր պատրաստել տվին. մէկը 48 թղթանոց, միւը՝ 80. առաջին տետրի թղթի և կազմի համար նրան վճարեցին 27 կոպէկ, իսկ երկրորդի համար՝ 35 կոպէկ: Ո՞րքան արժէր իւրաքանչիւր տետրի կազմը, եթէ երկու տետրերի էլ կազմը նոյնչափ արժէր, թուղթն էլ նոյն գնով էր:

#### զ. Տանը

459. Հայրը իր երկու որդկերանց երկու հատ տասը կոպէկանոց, երեք հատ էլ տասնըհինգ կոպէկանոց տեց: Այս փողի հինգերորդ մասը նա պատիրեց տալ քրոջը,

իսկ մնացածը եղբօր հետ հաւասար բաժանել: Ո՞րքան փող ընկաւ ամեն մէկին:

460. Տանտիկինը քառորդ փութ ցորենի ալիւր գնեց, փունաը Շ կոպէկի հաշւով: Նա որքան փող յետ ստացաւ մի բուբուց:

461. Ի՞նչն է աւելի թանգ և որքան. 5 փունտ շաքարը 17-ական կոպէկով, թէ 2 փունտ սուրճը 45-ական կոպէկով:

462. Առաջին կիսամեակում (տարւայ վեց ամիսներում) ծառան ամիսը 6 ըուբլի էր ստանում, իսկ երկրորդ կիսամեակում՝ երկուական ըուբլի աւելի: Ո՞րքան փող ստացաւ ծառան մի տարում:

463. Սպասուհին վարձել էր տարին 72 ըուբլի ոռձիկով: 8 ամիս ծառայելուց յետոյ նա ծառայութիւնը թողեց և հաշիւ տեսնելիս միայն 29 ըուբլի ստացաւ: Սպասուհին առաջ որքան փող էր ստացած եղել տանտիկնոջից:

464. Որդին 6 տարեկան է. աղջիկը նրանից երկու անգամ աւելի հասակ ունի. հայրը որդուց ու աղջկանից երեք անգամ աւելի հասակ ունի, իսկ մայրը 5 տարով պակաս հասակ ունի նրանց հօրից: Քանի տարեկան է սրանցից իւրաքանչիւրը:

465. Հայրը 12 փունտ խնձոր գնեց 48 կոպէկի, իսկ մայրը 72 կոպէկի խաղող գնեց: Խաղողը խնձորից երկու անգամ աւելի թանգ արժէր: Քանի փունտ խաղող է գնւած:

466. Տանտիրը իր տունը տարեկան 96 ըուբլի վարձով տւեց: Կեցողները միայն 9 ամիս մնացին այդ բնակարանում: Քանի ըուբլի վճարեցին նրանք բնակարանի համար:

467. Տանտիկինը օրական 6 կոպէկ տալիս է սկ հացի, 12 կոպ. սպիտակ հացի, 15 կոպ. մսի, 5 կոպ. էլ կարտոֆէլի և իւղի: Քանի օր նրան կբաւականացնէ 72 կոպէկը:

468. Տանտիկինը մէկ ու կէս դիւժին պնակ գնեց

90 կոպէկի, որոնցից 3 պնակ կոտրեցին, 10 պնակ տանտիկինն իրեն թողեց, իսկ մնացածները քրոջը տւեց: Ո՞րքան արժեն քրոջ տւած պնակները:

469. Հայրը Շ դիւժին գրչածայր գնեց, որոնց կէսը նա իր համար պահեց, երրորդ մասը տւեց աղջկան, իսկ մնացածները հաւասար բաժանեց երկու որդիների մէջ: Քանի գրչածայր ստացաւ իւրաքանչիւր որդին:

470. Մի կին 8 կճուճ գնեց, իսկ միւսը՝ 4 արդակիսի կճուճներ, և նրանք միասին 4 հատ 15 կոպէկանոց վճարեցին: Ո՞րքան արժէ ամեն մէկի գնածը:

471. Կինը մի ըուբլի ծախսեց. նա 16 փունտ նաւթ առաւ փունտը 4 կոպ. և չիթ արշինը 18 կոպ: Քանի արշին չիթ գնեց նա:

472. Երկու եղբայրների տարիքը միասին 61 է: Քանի տարեկան է եղբայրներից իւրաքանչիւրը, եթէ նրանցից մէկը 13 տարի մեծ է միւսից:

473. Երեք դարակներում 54 դիրք կայ. ներքեմի դարակում միջին դարակի գրքերից 2 դիրք պակաս է, իսկ միջին դարակում վերեկի դարակի գրքերից 2 դիրք պակաս է: Ո՞րքան դիրք կայ իւրաքանչիւր դաշտակում:

474. 12 փունտ բրդից 24 վերշոկ լայնութեամբ 26 արշին շալ է դուրս գալիս: Ո՞րքան բուրդ հարկաւոր կինի 20 վերշոկ լայնութեամբ 65 արշին շալ պատրաստելու համար:

475. Երեխան 60 թերթ սպիտակ ու մոխրագոյն թուղթ ունէր. 15 թերթ սպիտակ և 27 թերթ մոխրագոյն թուղթ բանեցնելուց յետոյ նրա մօտ այս երկու տեսակներից հաւասար չափով թուղթ մնաց: Քանի սպիտակ թերթ և քանի մոխրագոյն թերթ թուղթ ունէր երեխան:

476. Երեք եղբայրներ 90 ըուբլի իրար մէջ այնպէս բաժանեցին, որ մեծ եղբօր ստացած իւրաքանչիւր 6 ըուբլու դէմ միջակ եղբօրը միայն 5 ըուբլի ընկաւ, իսկ փոքրին՝ 4 ըուբլի: Բայց յետոյ մեծ եղբայրը իր բաժինը տւեց միւսներին, որոնք այս փողը հաւասար բաժանեցին: Որչափ փող ընկաւ փոքր եղբայրներից իւրաքանչիւրին:

Երկուսի փոքր ու մեծ շարքեր.

295.

296.

297

298.

$2 \times 2 + 27$	$2 \times 11 + 19$	$34 : 2 + 65$	$2 \times 27 + 2 \times 21$
$2 \times 8 - 7$	$2 \times 17 + 46$	$28 : 2 + 67$	$2 \times 46 - 2 \times 14$
$2 \times 8 - 5$	$2 \times 24 - 19$	$42 : 2 - 16$	$2 \times 28 + 2 \times 15$
$47 + 2 \times 7$	$2 \times 33 + 29$	$45 - 80 : 2$	$86 : 2 - 56 : 2$
$96 - 2 \times 9$	$2 \times 49 - 98$	$48 + 66 : 2$	$56 : 2 + 64 : 2$
$55 + 20 : 2$	$2 \times 50 - 96$	$94 - 94 : 2$	$48 : 2 - 14 : 2$
$100 - 2 : 2$	$38 + 2 \times 12$	$59 - 30 : 2$	$5 \times 13 + 54 : 2$
$67 + 10 : 2$	$29 + 2 \times 16$	$61 - 38 : 2$	$5 \times 16 - 65 : 5$
$14 : 7 \times 5$	$74 - 2 \times 33$	$16 + 54 : 2$	$90 : 2 + 2 \times 19$
$16 : 8 \times 4$	$100 - 2 \times 41$	$52 - 76 : 2$	$100 : 5 - 5 \times 3$

Երկուսի հաշվետախտակը: Տես 299. փարժութիւնները:

1	5	9	2	6	10	3	7	4	8
19	12	16	20	13	17	14	18	11	15
26	30	23	27	24	28	21	25	29	22
33	37	34	38	31	35	39	32	36	40
44	48	41	45	49	42	46	50	43	47
16	10	4	20	14	8	2	18	12	6
34	26	36	28	30	22	40	32	24	38
60	54	46	52	56	50	48	42	58	44
64	80	74	66	72	78	68	76	62	70
90	84	100	94	82	92	98	86	96	88

299. Փարժութիւններ. 1)  $2 \times 1, 2 \times 5, 2 \times 9, 2 \times 6 \dots$ ; 2)  $1 \times 2, 5 \times 2, 9 \times 2 \dots$ ; 3)  $16 = 2 \times 8, 10 = 2 \times 5, 4 = 2 \times 2 \dots$ ; 4)  $16 = 8 \times 2, 10 = 5 \times 2, 4 = 2 \times 2 \dots$ ; 5)  $16 : 2, 10 : 2, 4 : 2 \dots$ ; 6)  $1 = 2 : 2, 5 = 10 : 2, 9 = 18 : 2 \dots$ ; 7)  $2 = 2 : 1, 2 = 20 : 5, 2 = 18 : 2 \dots$ ; 8)  $2 \times 1 + 1(2, 3 \dots 9), 2 \times 5 + 1(2, 3 \dots 9) \dots$ ; 9)  $2 \times 5 - 1(2, 3, 4, 5), 2 \times 9 - 1(2, 3 \dots 9) \dots$ ; 10)  $16 : 2 + 1(2, 3 \dots 9), 10 : 2 + 1(2, 3 \dots 9)$ , 11)  $16 : 2 - 1(2, 3) 20 : 2 - 1(2, 3 \dots)$ , 12)  $2 \times 1 + 2 \times 5, 2 \times 5 + 2 \times 9 \dots$ ; 13)  $2 \times 19 - 2 \times 1, 2 \times 12 - 2 \times 5 \dots$ ; 14)  $26 : 2 + 30 : 2, 30 : 2 + 24 : 2$ ; 15)  $60 : 2 - 34 : 2, 44 : 2 - 26 : 2 \dots$ ; 16)  $2 \times 1 + 90 : 2, 2 \times 4 + 84 : 2 \dots$ ; 17)  $2 \times 1 - 16 : 2, 2 \times 5 - 10 : 1 \dots$  և այլն:

300. Տակտով հաշիւ.  $8 \times 8 - 24 : 8 + 2 \times 7 - 27 + 8 : 2 = ?$

և այլն:

301. Տակտով հաշիւ.  $64 : 8 \times 6 + 16 : 4 - 27 + 48 = ?$  և այլն:

Երեքի փոքր ու մեծ շարքեր.

302. $3 \times 5 + 18$	303. $3 \times 2 + 3 \times 9$	304. $3 \times 14 + 24$
$3 \times 9 - 19$	$3 \times 10 - 3 \times 7$	$3 \times 25 - 57$
$3 \times 10 - 23$	$3 \times 8 - 3 \times 1$	$53 + 3 \times 13$
$54 - 3 \times 9$	$21 : 3 - 15 : 3$	$96 : 3 - 19$
$24 + 3 \times 7$	$12 : 3 + 21 : 3$	$60 - 75 : 3$
$33 + 3 \times 6$	$15 : 3 + 30 : 3$	$54 : 3 + 37$
$24 : 3 + 45$	$3 \times 5 + 27 : 3$	$3 \times 38 - 48$
$27 : 3 - 6$	$3 \times 7 - 6 : 3$	$96 : 8 + 28$
$15 + 6 : 3$	$3 \times 2 + 12 : 3$	$90 : 2 + 48$
$46 - 27 : 3$	$3 \times 4 - 9 : 3$	$65 : 5 - 7$

305. $3 \times 31 - 3 \times 18$	306. $16 + 25 - 3 \times 13$	307. $3 \times 9 \times 2$
$3 \times 16 + 3 \times 8$	$73 - 45 + 57 : 3$	$3 \times 7 \times 4$
$48 : 3 + 72 : 3$	$27 + 68 - 3 \times 16$	$3 \times 1 \times 9$
$36 : 3 - 18 : 3$	$3 \times 32 - 59 + 28$	$3 \times 10 \times 3$
$42 : 3 + 54 : 3$	$54 : 3 + 37 - 48$	$3 \times 2 \times 8$
$3 \times 25 + 51 : 3$	$19 + 35 - 2 \times 19$	$57 : 3 \times 4$
$3 \times 18 - 42 : 3$	$80 - 46 + 8 \times 7$	$48 : 3 \times 4$
$84 : 3 + 3 \times 14$	$8 \times 6 + 33 - 42$	$96 : 4 : 3$
$90 : 3 - 3 \times 7$	$92 : 4 + 28 - 15$	$54 : 3 \times 5$
$69 : 3 + 3 \times 16$	$5 \times 17 - 58 + 26$	$72 : 4 \times 3$

**308.** Տակտով հաշիւ. ա)  $3 \times 32 - 68 + 14 : 2 + 36 : 3 = ?$   
 բ)  $92 - 18 : 3 + 35 : 5 - 3 \times 16 : 2 + 28 : 4 = ?$  և այլն:

Երեքի հաշւետախտակը: Տես 299. վարժութիւնները:

1	5	9	3	7	2	6	10	4	8
19	13	17	12	16	20	14	18	11	15
27	22	26	30	24	28	21	25	29	23
32	31	33							
3	12	21	30	6	15	24	9	18	27
51	60	36	45	54	39	48	57	33	42
66	75	84	69	78	87	63	72	81	90
99	96	93							

Զորով փոքր ու մեծ շարքերը.

**309.**  $4 \times 7 + 15$     **310.**  $72 - 4 \times 10$     **311.**  $4 \times 8 - 16 : 4$   
 $4 \times 6 + 37$      $38 + 4 \times 4$      $4 \times 7 + 4 \times 3$   
 $4 \times 10 - 17$      $100 - 4 \times 3$      $4 : 4 + 4 \times 4$   
 $4 \times 4 - 4$      $27 + 36 : 4$      $40 : 4 - 32 : 4$   
 $4 \times 4 - 8$      $45 + 40 : 4$      $36 : 4 + 4 \times 2$   
 $4 \times 9 + 16$      $81 - 24 : 4$      $16 : 4 \times 3$   
 $4 \times 7 - 7$      $90 - 8 : 4$      $40 : 10 \times 7$   
 $93 - 4 \times 6$      $89 + 8 : 4$      $20 : 5 \times 2$   
 $91 - 4 \times 8$      $72 - 12 : 4$      $12 : 3 \times 6$   
 $48 + 4 \times 10$      $56 + 20 : 4$      $36 : 9 \times 10$

**312.**  $4 \times 11 + 38$     **313.**  $56 : 4 + 58$     **314.**  $4 \times 20 - 4 \times 12$   
 $4 \times 14 - 48$      $68 : 4 + 63$      $4 \times 17 + 4 \times 4$   
 $4 \times 18 - 56$      $72 : 4 - 10$      $52 : 4 - 32 : 4$

$4 \times 21 + 16$	$64 : 4 - 7$	$60 : 4 + 72 : 4$
$4 \times 24 - 7$	$39 + 84 : 4$	$4 \times 11 - 60 : 4$
$4 \times 17 + 24$	$48 + 92 : 4$	$100 : 4 + 4 \times 17$
$57 - 2 \times 24$	$92 - 68 : 4$	$68 : 4 + 4 \times 14$
$65 - 5 \times 13$	$57 + 36 : 2$	$4 \times 18 - 75 : 5$
$19 + 5 \times 15$	$82 - 12 \times 5$	$92 : 2 - 4 \times 7$
$100 - 5 \times 19$	$100 - 19 \times 5$	$68 : 4 + 5 \times 13$

**315.** Տակտով հաշիւ. ա)  $4 \times 24 - 68 : 4 \times 6 \times 3 - 12 : 4 = ?$   
 բ)  $92 : 4 + 27 : 3 + 5 \times 11 - 42 : 7 = ?$

Չորսի հաշւետախտակը: Տես 299. վարժութիւնները:

1	6	2	7	3	8	4	9	5	10
12	17	13	18	14	19	15	20	11	16
23	25	22	24	21					
32	16	28	12	40	24	8	36	20	4
60	44	72	56	68	52	80	64	48	76
84	100	92	88	96					

Հնգի փոքր ու մեծ շարքերը.

<b>316.</b> $5 \times 9 + 36$	<b>317.</b> $67 - 5 \times 8$	<b>318.</b> $5 \times 9 + 5 \times 3$
$5 \times 5 + 28$	$98 - 5 \times 10$	$5 \times 10 - 5 \times 7$
$5 \times 6 - 25$	$31 + 5 \times 6$	$5 \times 6 - 5 \times 4$
$5 \times 4 - 13$	$65 + 30 : 5$	$5 \times 2 + 5 \times 6$
$5 \times 3 + 78$	$79 + 10 : 5$	$5 \times 5 - 5 \times 4$
$5 \times 6 - 18$	$50 - 5 : 5$	$30 : 6 \times 9$
$5 \times 7 + 55$	$85 + 35 : 5$	$10 : 2 \times 5$
$81 - 5 \times 7$	$76 + 20 : 5$	$40 : 8 \times 1$
$53 - 5 \times 9$	$12 - 15 : 5$	$35 : 7 \times 10$
$36 + 5 \times 1$	$10 - 5 : 5$	$50 : 10 \times 3$

**319.**  $5 \times 11 + 19$     **320.**  $60 : 5 + 39$     **312.**  $5 \times 20 - 5 \times 17$   
 $5 \times 13 + 17$      $80 : 5 + 75$      $5 \times 15 + 5 \times 1$   
 $5 \times 8 - 13$      $100 : 5 - 3$      $5 \times 14 - 5 \times 11$   
 $5 \times 6 - 11$      $75 : 5 - 8$      $70 : 5 - 30 : 5$   
 $5 \times 11 - 29$      $17 + 65 : 5$      $100 : 5 - 5 : 5$   
 $5 \times 5 + 47$      $45 - 90 : 5$      $90 : 5 + 50 : 5$   
 $5 \times 17 - 56$      $75 + 55 : 5$      $5 \times 17 + 75 : 5$   
 $29 + 5 \times 11$      $91 - 5 \times 17$      $5 \times 15 + 95 : 5$   
 $81 - 5 \times 14$      $37 + 5 \times 11$      $85 : 5 + 5 \times 13$   
 $100 - 5 \times 17$      $55 - 85 : 5$      $100 : 5 - 5 \times 3$

**322.** Տակտով հաշիւ.  $6 \times 10 - 6 \times 8 - 30 : 6 = ?$  Խայլն:

**323.** Տակտով հաշիւ.  $54 : 6 + 88 : 11 + 72 : 9 - 14 = ?$   
Խայլն:

Հնդի հաշւետախտակը: Տես 299. վարժութիւնները:

1	4	7	10	2	5	8	3	6	9
12	15	18	13	16	19	11	14	17	20
15	30	45	10	25	40	5	20	35	50
55	70	85	60	95	80	75	90	65	100

Վեցի փոքր ու մեծ 2արքերը.

**324.**  $6 \times 3 + 19$     **325.**  $80 - 6 \times 7$     **326.**  $6 \times 3 + 6 \times 7$   
 $6 \times 6 + 55$      $24 + 6 \times 9$      $6 \times 9 - 6 \times 6$   
 $6 \times 5 - 22$      $56 - 6 \times 8$      $42 : 6 + 24 : 6$   
 $6 \times 7 - 26$      $95 + 30 : 6$      $54 : 6 - 36 : 6$   
 $6 \times 8 + 27$      $67 + 42 : 6$      $60 : 6 - 6 \times 1$   
 $6 \times 6 - 9$      $100 - 60 : 6$      $24 : 4 \times 1$   
 $6 \times 3 + 25$      $52 + 48 : 6$      $54 : 9 \times 2$   
 $90 - 6 \times 4$      $54 - 24 : 6$      $42 : 7 \times 10$   
 $63 - 6 \times 10$      $77 + 18 : 6$      $60 : 10 \times 5$   
 $36 + 6 \times 6$      $85 - 54 : 6$      $12 : 2 \times 8$

**327.**  $6 \times 12 - 39$     **328.**  $6 \times 8 + 6 \times 4$     **329.**  $6 \times 13 - 3 \times 13$   
 $6 \times 9 + 27$      $6 \times 16 - 6 \times 8$      $6 \times 6 + 4 \times 12$   
 $80 - 6 \times 11$      $66 : 6 - 30 : 6$      $75 : 3 + 48 : 6$   
 $96 : 6 - 7$      $90 : 6 + 36 : 6$      $3 \times 25 + 18 - 69$   
 $48 : 6 + 36$      $6 \times 10 - 90 : 6$      $6 \times 14 - 48 + 27$   
 $67 + 30 : 6$      $6 \times 6 + 48 : 6$      $84 - 56 + 72 : 3$   
 $78 : 6 + 46$      $42 : 6 + 6 \times 9$      $38 + 44 - 96 : 6$   
 $56 + 42 : 6$      $6 \times 2 \times 8$      $72 : 3 : 6$   
 $100 - 42 : 6$      $4 \times 6 \times 3$      $48 : 6 : 8$   
 $84 : 6 + 86$      $5 \times 3 \times 6$      $6 \times 9 : 2$

**330.** Տակտով հաշիւ.  $w) 6 \times 13 + 18 : 6 + 14 : 7 + 54 : 6 = ?$   
p)  $84 : 6 + 2 \times 17 - 9 : 3 + 75 : 5 - 14 = ?$  Խայլն:

Վեցի թւակարգի հաշւետախտակը: Տես 299. վարժութիւնները:

1	3	6	10	5	9	4	7	2	8
12	15	11	14	16	13				
48	24	60	12	42	18	30	6	54	36
78	66	90	84	96	72				

Եռթի փոքր ու մեծ 2արքերը:

**331.**  $7 \times 7 + 45$     **332.**  $60 - 7 \times 6$     **333.**  $7 \times 10 - 7 \times 3$   
 $7 \times 9 - 39$      $23 + 7 \times 8$      $7 \times 7 + 7 \times 6$   
 $7 \times 8 - 17$      $54 - 7 \times 1$      $56 : 7 + 28 : 7$   
 $7 \times 8 + 28$      $86 + 42 : 7$      $7 \times 8 + 35 : 7$   
 $7 \times 10 - 49$      $46 + 56 : 7$      $63 : 7 - 7 \times 1$   
 $7 \times 9 + 29$      $100 - 70 : 7$      $28 : 4 \times 5$   
 $7 \times 1 - 7$      $23 - 49 : 7$      $56 : 8 \times 3$   
 $82 - 7 \times 9$      $70 + 70 : 7$      $14 : 2 \times 9$   
 $51 - 7 \times 6$      $64 - 63 : 7$      $21 : 3 \times 10$   
 $34 + 7 \times 7$      $35 + 49 : 7$      $70 : 10 \times 4$

**334.** Տակտով հաշիւ.  $7 \times 9 - 45 + 63 : 7 - 3 \times 8 = ?$

**335.** Տակտով հաշիւ.  $70 : 7 + 4 \times 15 - 27 : 9 + 33 - 61 = ?$   
և այլն:

<b>336.</b> $7 \times 7 + 35$	<b>337.</b> $63 : 7 + 7 \times 2$	<b>338.</b> $3 \times 24 - 2 \times 28$
$100 - 7 \times 11$	$49 : 7 + 7 \times 11$	$6 \times 9 + 3 \times 9$
$45 + 7 \times 5$	$7 \times 13 - 56 : 7$	$3 \times 16 + 2 \times 17$
$49 : 7 + 79$	$7 \times 6 - 91 : 7$	$96 : 4 + 95 : 5$
$84 : 7 + 57$	$7 \times 4 \times 3 - 17$	$96 : 8 - 72 : 9$
$52 - 35 : 7$	$7 \times 6 \times 2 + 19$	$81 : 9 + 2 \times 27$
$42 - 42 : 7$	$7 \times 12 - 7 \times 4$	$7 \times 10 : 5 + 26$
$91 : 7 + 69$	$7 \times 9 + 7 \times 2$	$63 : 7 \times 9 - 36$
$100 - 63 : 7$	$98 : 7 + 9 \times 7$	$78 : 6 \times 7 - 26$
$7 \times 10 - 25$	$8 \times 8 - 70 : 7$	$64 : 8 \times 7 - 28$

Ուժի փոքր ուժ մեծ շաբաթը.

<b>339.</b> $8 \times 1 + 19$	<b>340.</b> $72 - 8 \times 6$	<b>341.</b> $8 \times 10 - 8 \times 6$
$8 \times 5 + 57$	$39 + 8 \times 5$	$8 \times 8 + 72 : 8$
$8 \times 6 - 25$	$70 - 8 \times 8$	$56 : 8 + 24 : 8$
$8 \times 10 - 46$	$88 + 32 : 8$	$40 : 8 - 16 : 8$
$8 \times 6 + 34$	$43 - 40 : 8$	$8 \times 9 - 48 : 8$
$8 \times 7 + 25$	$25 - 72 : 8$	$64 : 8 \times 1$
$8 \times 9 - 45$	$17 + 48 : 8$	$56 : 7 \times 9$
$90 - 8 \times 7$	$29 + 64 : 8$	$80 : 10 \times 3$
$24 + 8 \times 6$	$44 - 40 : 8$	$8 : 1 \times 4$
$18 + 8 \times 10$	$38 - 32 : 8$	$40 : 5 \times 8$

**342.** Տակտով հաշիւ.  $8 \times 9 - 24 : 8 + 2 \times 7 - 27 + 16 : 8 = ?$   
և այլն:

**343.** Տակտով հաշիւ.  $64 : 8 \times 6 : 4 + 7 \times 10 : 2 - 17 = ?$   
և այլն:

<b>344.</b> $8 \times 6 + 28$	<b>345.</b> $5 \times 18 - 47$	<b>346.</b> $5 \times 16 : 8$
$8 \times 10 - 57$	$4 \times 12 + 37$	$8 \times 12 : 2$
$39 + 8 \times 4$	$92 - 76 : 2$	$80 : 5 \times 4$
$40 : 8 + 64$	$8 \times 3 + 58 : 2$	$92 : 4 \times 2$
$96 : 8 - 8$	$8 \times 9 - 94 : 2$	$2 \times 48 : 4 : 2$
$52 - 48 : 8$	$8 \times 7 + 85 : 5$	$16 : 4 \times 2 \times 9$
$8 \times 3 + 8 \times 6$	$93 - 59 + 8 \times 7$	$32 : 8 \times 2 \times 7$
$8 \times 10 - 8 \times 7$	$73 - 64 + 88 : 8$	$8 \times 3 \times 2 + 27$

$96 : 8 - 40 : 8$	$36 + 39 - 4 \times 14$	$5 \times 9 \times 2 - 27$
$48 : 8 + 8 \times 4$	$80 - 41 + 5 \times 11$	$8 : 4 \times 19 + 24$

**347.** Տակտով հաշիւ. ա)  $8 \times 12 - 64 : 8 - 7 \times 8 + 24 : 8 = ?$   
բ)  $88 - 32 : 4 + 18 : 3 - 2 \times 16 + 56 : 8 = ?$  և այլն:

Ուժի թւակարգի հաշւեախատակը: Տես 299. վարժութիւններ:

1	4	7	10	2	5	8	3	6	9
12	11								
24	72	48	7	64	40	16	80	56	32
88	96								

Իննի փոքր ուժ մեծ շաբաթը.

<b>348.</b> $9 \times 8 + 28$	<b>349.</b> $81 - 9 \times 5$	<b>350.</b> $9 \times 4 + 9 - 7$
$9 \times 6 + 19$	$67 + 9 \times 2$	$9 \times 9 - 9 \times 6$
$9 \times 4 - 18$	$9 + 9 \times 10$	$45 : 9 - 18 : 9$
$9 \times 7 - 49$	$29 + 18 : 9$	$9 \times 2 + 72 : 9$
$9 \times 5 + 32$	$46 + 63 : 9$	$90 : 9 - 9 : 1$
$9 \times 9 - 48$	$100 - 9 : 9$	$45 : 5 \times 1$
$9 \times 2 + 36$	$64 - 90 : 9$	$81 : 9 \times 7$
$84 - 9 \times 2$	$57 + 27 : 9$	$72 : 8 \times 10$
$100 - 9 \times 10$	$46 + 36 : 9$	$63 : 7 \times 6$
$26 + 9 \times 5$	$44 - 54 : 9$	$54 : 6 \times 2$

**351.** Տակտով հաշիւ.  $9 \times 9 - 72 : 9 + 27 : 3 = ?$  և այլն:

**352.** Տակտով հաշիւ.  $72 : 9 \times 12 : 6 + 99 : 11 + 6 \times 9 = ?$

և այլն:

<b>353.</b> $9 \times 5 + 37$	<b>354.</b> $43 - 28 + 9 \times 3$	<b>355.</b> $2 \times 38 - 3 \times 19$
$9 \times 7 - 37$	$27 + 36 - 9 \times 5$	$78 : 2 + 54 : 3$
$100 - 9 \times 9$	$100 - 81 + 63 : 9$	$70 : 2 - 4 \times 7$
$43 - 63 : 9$	$72 - 29 + 3 \times 6$	$72 - 27 + 8 \times 6$
$72 : 9 + 88$	$56 + 28 - 5 \times 13$	$28 + 46 - 4 \times 14$
$36 : 9 + 77$	$75 - 36 + 64 : 4$	$100 - 72 + 72 : 6$

$$\begin{array}{lll} 9 \times 8 - 45 : 9 & 100 - 82 + 96 : 6 & 72 : 9 \times 8 \\ 9 \times 6 + 54 : 9 & 9 \times 4 \times 2 & 54 : 9 \times 14 \\ 36 : 9 + 9 \times 2 & 9 \times 8 : 6 & 32 : 8 \times 16 \\ 9 \times 7 - 9 : 9 & 9 \times 7 : 3 & 72 : 4 \times 5 \end{array}$$

356. Տակտով հաշիւ. ա)  $9 \times 6 - 45 : 9 + 18 : 9 - 6 = ?$  բ)  $3 \times 28 : 4 - 36 : 9 + 9 \times 6 = ?$  և այլն.

## II. Օրինակելի խնդիրների տեսակները

### 1. Տեսակ: Մի՛՛ թե՛՛ վե՛՛ օ՛՛ թե՛՛ է:

(Պարզ երեքի կանոն)

Իրաշըջան՝ արհեստանոցներում:

477. Ատաղձագործի արհեստանոցում 75 ալթուր շինում են 5 շաբաթում: Քմնի աթոռ կը շինի 3 շաբաթում:

478. Դարբնոցում 33 պայտը շինում են 3 ժամում: Քմնի պայտ կը շինեն 9 ժամում, 2, 5, 7 ժամում:

479. Կօշկակարի արհեստանոցում 7 շաբաթում 84 զոյդ կօշիկ կարեցին: Քմնի զոյդ կօշիկ կը կարեն 2, 3, 4, 8 շաբաթում:

480. Դարբնոցում 6 օրում 90 ֆունտ ածուխ բանեցին: Քմնի ֆունտ ածուխ կը բանեցնեն 2, 3, 4, 5 օրում:

481. Պղնձործը 45 գրւանքայ պղնձից 5 թաս շինեց: Քմնի գրւանքայ պղինձ կը բանեցնէ նա նոյն քաշով 9 թամի համար:

482. Կազմարարը 65 թերթից 13 տետրակ է կազմում: Նոյն չափի որքան տետրակ կը կազմէ 95 թերթից:

483. Հիւսնը 54 տախտակից 18 արկու է շինում: Ո՞րքան տախտակ կերթայ 5 արկուն: Ո՞րքան 9, 17, 25 արկուն:

484. Ատաղձագործը աշակերտական նստարանների մի դիւժինը 84 ըուբլով է շինում: Քմնի ըուբլի պէտք է ստանայ նա 14 նստարանի համար:

485. Կազմարարը 10 դասագիրքը 80 կոպէկով է կազմում: Քմնի կոպէկ կարժենայ 6, 11, 12 դասագրքի կազմը:

486. Հայթուկը 4 հացը 28 կոպէկով է ծախում: Քմնի հացի գինը է 77 կոպէկը:

### 2. Տեսակ: Մի՛՛ թե՛՛ վե՛՛ օ՛՛ թե՛՛ է:

(Բարդ երեքի կանոն)

Իրաշըջան՝ ժամանակ:

487. Զորս մշակներ 3 օրում 60 սաժէն երկայնութեան ակոս են փորում: Ի՞նչ երկայնութեան ակոս կը փորեն 5 այդպիսի մշակներ 4 օրում:

488. Գրագիրը 75 երես գրւածքն արտագրում է 3 օրում, օրական 5 ժամ պարապելով: Քմնի երես կարտագրէ նա, եթէ 4 օր, օրական 3 ժամ պարապի:

489. Դերձակի արհեստանոցում 3 օրւայ մէջ օրական 12 ժամ բանելով՝ 72 գլխարկ կարեցին: Քմնի գլխարկ կը կարեն այս արհեստանոցում 5 օրւայ մէջ, եթէ օրական 10 ժամ բանեն:

490. Քպաքամասի փողոցները լուսաւորելիս 5 օրում օրական 9 ժամ լապտերները վառելով՝ 90 գրւանքայ նաւթքանեցին: Ո՞րքան նավթ կը գնայ 4 օրում, եթէ լապտերները օրական 11 ժամ վառ պահեն:

491. Երկու գրաշարներ 6 օրում 48 երես տառ են շարում: Քմնի երես տառ կը շարէ մի գրաշարը 25 օրում:

### 3. Տեսակ: Փոխանակութիւն:

Իրաշըջան՝ իրեղէններ:

492. Կպրոցի համար բերել տւած 32 հատ 3 կոպէկանոց տետրակների տեղ՝ 4 կոպէկանոց տետրակներ առան: Քմնի հատ 4 կոպէկանոց տետրակ առան:

493. Խանութից առած մի դիւժին 6 կոպէկանոց բաժակները փոխեցին մի քանի 8 կոպէկանոց բաժակների հետ: Քանի 8 կոպէկանոց բաժակ ստացաւ փոխել տևողը:

494. Չորս կոպէկանոց 2 դիւժին սկզբաները փոխեցին 8 կոպէկանոց 6 հատ գունաւոր մատիտների և մի քանի 4 կոպէկանոց ուետինի հետ: Քանի ուետին ստացւեց:

495. Մէկը 3 դիւժին աթոռ գնեց՝ դիւժինը 24 բուքանոց, բայց յետոյ սրանց տեղ դիւժին ու կէս աւելի թանկ աթոռները ու մի սեղան տարաւ: Ի՞նչ արժէր սեղանը, եթէ առած աթոռների դիւժինը 36 բուքի արժէր:

496. Գրիգորը իր՝ 15 կոպէկանոց 6 պատկերները փոխեց Տիգրանի 7 կոպէկանոց 12 ներկերի հետ: Ո՞վ ում պէտք է վրադիր փող վճարէ և որքան:

497. Տանտիկինը 12 կոպէկանոց 7 ծաղկամանները փոխեց 25 կոպէկանոց 4 ծաղկամանների հետ: Քանի կոպէկ պէտք է նա վրադիր վճարէր:

#### 4. ՏԵՍԱԿ: ՇԱՀ ՈՒ ՎՆԱՍ:

Իրաշըջան՝ շուկայ:

498. Մանրավաճառը նարնջի տամնեակն առնում էր 55 կոպէկով, իսկ ինքը ծախում էր 75 կոպէկով: Ի՞նչքան վասարակ կունենայ նա, եթէ 30 նարինջ ծախէ:

499. Զենավաճառը ձկի հատը խանութներից առնում էր 27 կոպէկով, իսկ ինքը ծախում էր 40 կոպէկով: Ո՞րքան վաստակ կունենայ նա 6 ձուկ ծախելուց:

500. Խանութպանը մատիտների դիւժինը առաւ 48 կոպէկով, իսկ ինքը ծախեց 60 կոպէկով: Քանի մատիտ ծախեց նա, եթէ 36 կոպէկ վաստակ ունեցաւ:

501. Թղթավաճառը թղթի դաստան 18 կոպէկով առնելով 5 դաստայ ծախեց ու 30 կոպէկ վաստակեց: Քանիսով ծախեց նա մէկ դաստան:

502. Մրգավաճառը 9 ձմերուկ առաւ և ծախեց 81

կոպէկի: Ո՞րքան վնաս ունեցաւ նա, եթէ ինքը հատը 11 կոպէկով էր առել:

503. Մրգավաճառը սեխի հատին տւել էր 8 կոպէկ իսկ ինքը հատը 6 կոպէկով ծախեց և 48 կոպէկ վնաս ունեցաւ: Քանի հատ սեխ նա վնասով ծախեց:

504. Մրգավաճառը 23 կիտրոն ծախեց հատը 2 կոպէկով և 46 կոպէկ վնաս ունեցաւ: Կիտրոնի հատը ո՞րքան արժէր իրան:

505. Գնուած է մէկ ու կէս դիւժին ուետին հատը 3 կոպէկով: Ծախելիս խանութպանը հատին 2 կոպէկ վաստակ է ունեցել: Քանիսով է ծախել նա բոլոր ուետինները:

#### 5. ՏԵՍԱԿ: ԽԱՌՆՈՒՐԴԻ:

Իրաշըջան՝ շուկայ:

506. Երեք կոպէկանոց 10 գրւանքայ բըինձը խառնեցին 6 կոպէկանոց 5 գրւանքայ բընձի հետ: Ի՞նչքան կարժենայ խառնուրդի գրւանքան:

507. Երկու կոպէկանոց 4 գրւանքայ ալիւրը խառնեցին 7 կոպէկանոց 6 գրւանքայ ալիւրի հետ: Ի՞նչ գնով ծախեցին խառնուրդի գրւանքան, եթէ առանց շահի և վնասի ծախեցին:

508. Մրգավաճառը 5 կոպէկանոց 4 գրւանքայ խընձորը խառնեց 7 կոպէկանոց 4 գրւանքայ խնձորի հետ: Ի՞նչ կարժենայ խառնուրդի գրւանքան:

509. Թէյավաճառը 5 բուբլիանոց 7 ֆունտ թէյը խառնեց 3 բուբլիանոց 4 ֆունտ թէյի հետ: Ի՞նչ գնով պէտք է նա ծախէ խառնած թէյի ֆունտը՝ 8 բուբլի աշխատանք ունենալու համար:

510. Խառնել են 6 կոպէկանոց 6 ֆունտ կեռաս 3 կոպէկանոց 7 ֆունտ կեռասի հետ: Եթէ խառնուրդը ծախելուց 5 կոպէկ վնաս են ստացել, ուրեմն ֆունտը բանիսով են ծախած եղել:

511. Տասը բուբլիանոց 7 վեղրօ զինին խառնեցին ուրիշ գնանոց 4 վեղրօ գինու հետ: Խառնուրդի վեղրօն ծախեցին 9 բուբլով: Ո՞րքան արժէ երկրորդ տեսակի գինու վեղրօն, եթէ ծախքից 5 բուբլի աշխատանք ստացան:

512. Խառնել են 5 փութ 5 բուբլիանոց ձէթ, 6 փութ 4 բուբլիանոց և 5 փութ 3 բուբլիանոց ձէթ: Ի՞նչ գնով պէտք է ծախել խառնուրդի փութը՝ առանց շահ ու ֆնափի:

513. Քանի փութ 6 բուբլիանոց ալիւր պէտք է աւելացնել 6 փութ 9 բուբլիանոց ալիւրին՝ խառնուրդի փութը 8 բուբլու՝ առանց շահ ու ֆնափի ծախելու համար:

514. Վեղրօն 6 բուբլիանոց, 12 վեղրօ ոգուն (սպիրտին)՝ քանի վեղրօ ջուր պէտք է խառնել՝ վեղրօն առանց շահ ու ֆնափի 4 բուբլով ծախելու համար:

## 6. ՏԵՍԱԿ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆ:

515. Երկու ատաղձագործներ միասին 32 բուբլի աշխատեցին. մէկը բանեց 6 օր, իսկ միւսը՝ 10 օր: Ի՞նչքան փող ստացաւ ամեն մէկը:

516. Երեք երեխայ միասին 48 կոպէկի տանձ գնեցին. մէկը՝ 7 հատ, միւսը՝ 6 և երրորդը՝ 3: Ո՞րքան փող տւեց իւրաքանչիւրը:

517. Երկու դասարանների աշակերտները ուսուցչից 94 գրչածայր ստացան: Ո՞րքան գրչածայր բաժանեց ուսուցիչը իւրաքանչիւր դասարանում, եթէ առաջին դասարանում 29 աշակերտ կար, իսկ երկրորդում՝ 18:

518. Թուղթ ստորագրելու համար երկու գրագրների 1 բուբլի վճարեցին: Ո՞րքան պէտք է վճարել իւրաքանչիւրին, եթէ մէկը 3 ժամ գրեց միւսը՝ 2:

519. Վաճառականը 25 փունտ թէյ վաճառեց երեք գնողների: Մէկը թէյի համար վճարեց 28 բուբլի, միւսը՝ 14, իսկ երրորդը՝ 8: Քանի փունտ թէյ ստացաւ ամեն մի գնող:

520. Երկու ընկերներ միասին 12 նարինջ գնեցին: Մէկը 35 կ. տւեց, իսկ միւսը՝ 10 կ. պակաս: Քանի նարինջ պէտք է ստանայ նրանցից ամեն մէկը:

521. Հայրը 50 կոպէկ տւեց երկու որդկերանց և պատւիրեց այս փողը հասակներին համապատասխան բաժանել. ով մեծ է, նա աւելի ստանայ: Ո՞րքան ստացաւ որդիներից իւրաքանչիւրը, եթէ մէկը 11 տարեկան էր, միւսը՝ 14 տարեկան:

522. Վաճառականը 25 գրւանքայ թէյ ծախեց չորս գնողների: Արանցից մէկը 14 բուբլի վճարեց, միւսը սրանցից 12 բուբլի տւելի, երրորդը՝ 8 և չորրորդը երրորդից 6 բուբլի պակաս վճարեց: Քանի գրւանքայ թէյ ստացաւ իւրաքանչիւրը:

## 7. ՏԵՍԱԿ: ՈՐՈՇ ԶԱՓՈՎ ԱՌԱԲԿԱՅԻ ԳՆԻՑ ԻՄԱՆԱԼ ԱՄԲՈՂՋԻ ԳԻՆԸ:

523. Գիւղացին գրացուն երկու սայլ խոտ փթով ծախեց միւնոյն գնով. մի սայլի վրայ 23 փութ էր բարձած, միւսի վրայ՝ 27 փութ: Երկրորդ սայլաբեռի համար գիւղացին գրացուց 96 կ. տւելի ստացաւ առաջին սայլի համար ստացածից: Ի՞նչ արժէ խոտի փութը:

524. Մի կին 8 արշին չիթ գնեց, իսկ միւսը՝ նոյն գնով միայն 3 արշին և նրանից 60 կ. պակաս վճարեց: Քանի կոպէկ վճարեց առաջինը իր գնածի համար:

525. Քանի մատիտ է գնւած հատը 3 կոպէկով, եթէ 1 բուբլուց 13 կոպէկ յետ է ստացւած:

526. Մի արկղ թէյի համար գնողից 75 բուբլի էին պահանջում, բայց որովհետեւ նա մօտը միայն 60 բուբլի ունէր, արկղում եղածից նրան 5 փունտ պակաս տւին: Քանի փունտ թէյ կար արկղում:

527. 5 քարէտախատակ գնելուց յետոյ մօտ 36 կ. է մուռմ: Եթէ ես այդպիսի 8 քարքտախատակ գնէի, մօտիս բոլոր փողը կըծախսէի: Ո՞րքան փող կայ մօտա:

528. Եթէ մրգավաճառը ընկոյզի ֆունտը 25 կոպէկով ծախէ, բոլոր ծախածից 36 կոպէկ աշխատանք կունենայ, իսկ եթէ ֆունտը 21 կոպէկով ծախէ, ոչ աշխատանք կունենայ, ոչ վաստ: Քանի ֆունտ ընկոյզ ունէր մրգավաճառը:

529. Եօթը տեսրակ գնելու համար երեխային 4 կոպէկ պակասեց, իսկ եթք որ նա 5 տեսրակ առաւ, 6 կոպէկ էլ մօտը մնայ: Ի՞նչ արժէ տեսրակը:

530. Չորս դիւժին աթուների և 1 բազմոցի համար 90 բուբլի են ուղում, իսկ 2 դիւժին այդպիսի աթուների համար ուղում են 54 բուբլի: Ի՞նչ գնով էին ծախում աթուների դիւժինը և որքան արժէ բազմոցը:

531. Երկու կինմարդիկ նոյն գնով չիթ ու կալենկոր առան: Մէկը 8 արշ. չիթ ու 3 արշ. կալենկոր գնեց և վճարեց 98 կոպ., իսկ միւսը 5 արշ. չիթ և 3 արշ. կալենկոր և վճարեց 68 կոպ: Քանիսով էին ծախում չթի և կալենկորի արշինը:

## 8. ՏԵՍԱԿ: ՀԱՆԴԻՊՈՒՄ:

Իրաշրջան՝ մանապարհներ:

532. Երկու ճամբորդներ միաժամանակ հակառակ կողմերից ճանապարհ ընկան: մէկը գիւղից ելաւ, միւսը քաղաքից: առաջինը մի ժամում 3 վերստ էր անցնում, իսկ երկորդը՝ 4 վերստ: Քանի ժամից յետոյ նրանք կը հանդիպեն իրար, եթէ գիւղը քաղաքից 35 վերստ հեռու է:

533. Երկու քաղաքներ իրարից 76 վերստ հեռու են: այս քաղաքներից միաժամանակ երկու կառապան իրար հանդէպ դուրս եկան: մի կառապանը մի ժամում անցնում էր 9 վերստ, իսկ միւսը՝ 10 վերստ: Քանի ժամ կանցնի մինչև նրանց հանդիպելը:

534. Երկու գիւղերիրարից 56 վերստ հեռու են: այս գիւղերից միաժամանակ դուրս եկան երկու գիւղացիներ և իրար հանդիպեցին 4 ժամ յետոյ: Եթէ գիւղացիներից մէկը մի ժա

մում 6 վերստ էր անցնում, միւս գիւղացին քանի վերստ էր անցնում մի ժամում:

535. Երկու գնացքներ միաժամանակ իրար հանդէպ գուրս եկան երկու քաղաքներից, որոնք իրարից 96 վերստ հեռու են: Մէկը մի ժամում 23 վերստ է անցնում, իսկ միւսը՝ 25 վերստ: Քանի ժամից յետոյ գնացքները կը հանդիպեն: Մինչև հանդիպելը իւրաքանչիւր գնացք քանի վերստ կանցնի:

436. Երկու ընկերներ իրարից 84 քայլափոխ հեռու կանգնեցին: Առաջինն անցաւ Յ քայլափոխ, իսկ երկրորդը՝ 4, և երկուսն էլ կանգնեցին: Դարձեալ նրանք այդքանական քայլափոխ անցան, և երկուսն էլ կանգնեցին յետոյ՝ դարձեալ և մինչև հանդիպելը: Այսպէս քանի անգամից յետոյ նրանք իրար հանդիպեցին:

537. Երկու մարդիկ նաւակներով գետի վրայ իրար հանդէպ էին գնում, մէկը գնում էր ջրի հետ և մի ժամում 6 վերստ էր անցնում, միւսը՝ դէպի վեր և մի ժամում 2 վերստ էր անցնում: Քանի վերստ նրանք միասին անցան, եթէ 5 ժամից յետոյ հանդիպեցին:

## 9. ՏԵՍԱԿ: ԻՐԱՐ ՀԱՍՆԵԼԲ:

Իրաշրջան՝ մանապարհներ:

538. Քաղաքից մէկը ոտով ճանապարհ ընկաւ և ամեն մի ժամում անցնում էր 4 վերստ: Յ ժամ յետոյ նրա ետևից դուրս եկաւ մի ձիաւոր, որ ամեն մի ժամում 10 վերստ էր անցնում: Քանի ժամից յետոյ ձիաւորը կը հասնի ոտով գնացողին:

539. Մի երեխայ միւսից յետ էր մնացել 24 սաժէն: Առաջ ընկածը ամեն մի բոպէ 48 սաժէն էր անցնում, իսկ նրա ետևից ընկածը՝ 56-ական սաժէն: Քանի բոպէում երկրորդ երեխան կը հասնի առաջինին:

540. Երկու երեխաներ իրարից 76 սաժէն հեռու էին:

92 Երկրորդ ընթացք:—1-ից մինչեւ 100-ի թևակարգը:

կանգնած: Մէկն ընկաւ միւսի ետևից, և ամեն մի բոպէում 52 սաժէն անցնելով, նրան հասաւ 19 բոպէ յետոյ: Քանի սաժէն էր անցնում մի բոպէում միւս երեխան:

541. Գիւղացին իր գիւղից ոտով ճանապարհ ընկաւ գէպի քաղաք և ժամը 4 վերստ էր անցնում: 9 ժամ անցնելուց յետոյ՝ մի ուրիշ գիւղացի նրա ետևից սայլով ճանապարհ ընկաւ և ժամը 7 վերստ էր անցնում: Քանի ժամ առաջին գիւղացին ճանապարհի վրայ էր եղել երբ նրան երկրորդը հասաւ: Քանի վերստ անցաւ առաջինը. մըքան վերստ անցաւ երկրորդը: Ուրեմն գիւղից մըքան վերստ տարածութեան վրայ երկրորդ գիւղացին հասաւ առաջինին:

542. Գիւղացին քաղաքից դաւրս եկաւ ցերեկւայ ժամը 12-ին և ժամը 4 վերստ էր անցնում: 5 ժամ յետոյ նոյն ճանապարհով քաղաքից դուրս եկաւ մի վաճառական, որը ժամը 9 վերստ էր անցնում: Քանի ժամից յետոյ վաճառականը հասաւ գիւղացուն: Ո՞ր ժամին: Քաղաքից ի՞նչ տարածութեան վրայ:

543. Քաղաքից մինոյն օրը և մինոյն ճանապարհով դուրս եկան կառքով ու ձիով: Կառքով դուրս ելան առաւօտայ ժամը 8-ին և ամեն մի ժամում 8 վերստ էին անցնում, իսկ ձիաւորները դուրս եկան երեկոյեան ժամը 6-ին և ամեն մի ժամում 10 վերստ էին անցնում: Ձիաւորները երբ կը համնին կառքին:

## 10. ՏԵՍԱԿ. ԱԻԱՀԱՆՆԵՐ.

544. Քառասուն վեղրանոց տակառը երկու ծորակ ունի. մի բոպէում ծորակներից մէկից 3 վեղրո ջուր է վազում, իսկ միւսից՝ 5 վեղրո: Քանի բոպէում կը դատարկի տակառը, եթէ երկու ծորակներն էլ բացվին:

545. Աւազանը 100 վեղրո ջուր է առնում և երեք խողովակ ունի. մի բոպէում առաջին խողովակից դուրս է թափում 5 վեղրո, երկրորդից՝ 7 վեղրո, երրորդից՝ 8

վեղրո ջուր: Քանի բոպէում աւազանը կըդատարկվի, եթէ բոլոր երեք խողովակները բացվին:

546. Աւազանը, որ 95 վեղրո ջուր է առնում, երկու խողովակ ունի, մի խողովակով մի բոպէում 12 վեղրո ջուր է թափում աւազանի մէջ, իսկ միւսով աւազանից դուրս է թափում 7 վեղրո ջուր: Քանի բոպէում կըցւի աւազանը, եթէ երկու խողովակն էլ բանանք:

547. Խնքնաեռը 60 բաժակ ջուր է առնում. ծորակից մի բոպէում դուրս է թափում 9 բաժակ ջուր: Քանի բոպէում կարելի է լցնել խնքնաեռը, ծորակը բաց թողնելով, եթէ մի բոպէում 12 բաժակ ջուր լցվի նրա մէջ:

548. 96 վեղրո առնող աւազանի մէջ երկու խողովակներ են անցկացրած. մի խողովակով նա լցումէ 12 բոպէում, իսկ միւսով աւազանը դատարկվում է 16 բոպէում: Քանի բոպէում կը լցվի աւազանը, եթէ երկու խողովակն էլ միասին բանալու լինինք:

## III Զանազան տեսակ խնդիրներ անցած իրավաններից

549. Վճարւած է 6 նարնջի 42 կոպէկ, իսկ 7 կիտրոնի՝ 35 կոպէկ: Ո՞րքան պէտք է վճարել 4 նարնջի և 5 կիտրոնի:

550. Թէյավաճառը 9 գրւանքանոց 5 արկդ թէյի վճարել է 90 բուրլի: Ո՞րքան պէտք է վճարել նոյն թէյի 3 արկդին, որոնց ամեն մէկը 12 գրւանքայ քաշ ունի:

551. Գնւած է 12 արշին սկ մահուդ 36 բուրլու և 9 արշին թաւիչ: Ո՞րքան է վճարւած թաւիչի համար, եթէ յայտնի է, որ թաւիչի արշինը 3 բուրլի աւելի արժէ մահուդի արշինից:

552. Ութը հիւսներ տուն շինեցին 9 շաբաթւայ մէջ: Քանի շաբաթւայ մէջ այս տունը կը շինէին 6 հիւսներ:

553. Զորս բանւորներ 6 օրում ուտում են 2 փութ միա: Ո՞րքան կուտեն 3 բանւորներ 8 օրում:

554. Տասներկու գրւանքայ առնող կեռասով լիքը զամբիւղը փոխեցին բայի հետ: Փոխարէնը քանի՞ գրւանքայ բայ է ստացւած, եթէ կեռասի գրւանքան 6 կոպէկ արժէ, իսկ բալինը՝ 9 կոպէկ:

555. Տանտիկինը 7 գրւանքայ բայ գնեց գրւանքան 8 կոպէկով, և 11 գրւանքայ խնձոր ու վճարեց 92 կոպէկ: Ի՞նչ արժէ խնձորի գրւանքան:

556. Աւագանը 96 վեդրօ ջուր է տանում և ունի երկու խողովակ. մէկ խողովակով աւագանը լցում է 12 բովէում, իսկ միւսով աւագանը գատարկում է 16 բովէում: Ո՞րքան ժամանակում կր լցվի աւագանի երրորդ մասը, եթէ երկումն էլ միաժամանակ բանալու լինինք:

557. Շոգենաւը գտնում է նաւից 98 վերստ հեռաւուութեան վրայ. շոգենաւը մի ժամում 13 վերստ է անցնում, իսկ նաւը՝ 6 վերստ: Ո՞րքան ժամանակից յետոյ շոգենաւը կը հանդիպի նաւին:

558. Մըգավաճառը 45 հատ կիարոն և նարինջ ունէր. երբ որ նա 7 կիարոն ու 12 նարինջ ծախեց, այն ժամանակ նրա մօտ կիարոններից 4 նարինջ աւելի մնաց: Քանի կիարոն և քանի նարինջ ունէր մըգավաճառը:

559. Երկու արկդներում 56 ֆունտ թէյ կար. երբ որ մէկից 8 ֆունտ հանեցին և միւսի մէջ դրին, այնժամանակ առաջնում երկրորդից 4 ֆունտ աւելի մնաց: Քանի՞ ֆունտ թէյ կար ամեն մի արկդում:

560. Վաճառականը 7 սոմառ (16 փութ) գարին ծախեց 80 բուբլու և 18 բուբլի վասս ունեցաւ: Ի՞նքը գաճառականը ի՞նչ գնով էր առել գարու սոմառը:

561. Մանրավաճառը ժապաւէնի 8 արշինը 48 կոպէկով էր առնում, իսկ 3 արշինը ծախում 27 կոպէկով: Քանի արշին ժապաւէն պէտք է ծախէ մանրավաճառը՝ 45 կոպէկ աշխատանք ստանալու համար:

562. Խանութպանը խառնեց շիշը 6 կոպէկանոց 6 շիշ քացախ՝ շիշը 8 կոպէկանոց 2 շիշ քացախի հետ ու խառնած քացախի շիշը ծխեց 5 կոպէկով: Ո՞րքան վաս ունեցաւ խանութպանը:

563. Խառնել են 9 ֆունտ 6 կոպէկանոց բրինձը մի քանի ֆունտ 4 կոպէկանոց բրնձի հետ: Երկրորդ աեսակից քանի՞ ֆունտ կար խառնուրդի մէջ, եթէ տէրը բոլոր խառնուրդը 96 կոպէկի ծախելով 14 կոպէկ օգուտ ունեցաւ:

564. Ութը ներկարարներ, օրական 3 ժամ աշխատելով, տունը 4 օրում ներկեցին: Քանի օրում կը ներկէին այս տունը 4 ներկարարներ, օրական 4 ժամ աշխատելով:

565. Հայի 4 գրւանքան 11 կոպէկ արժէ: Ո՞րքան արժէ 36 գրւանքան:

566. Երկու տակառների մէջ 58 վեդրօ ջուր կայ: Եթէ առաջին տակառից 10 վեդրօ թափելու լինենք, այն ժամանակ նրա մէջ երկրորդից 5 անգամ պակաս կը մնայ: Ամեն մէկ տակառի մէջ որքան ջուր կար:

567. Մէկին հինգ հունգ ունենալով՝ 60 սոմառ ցորեն կասեցին: Ո՞րքան ցորեն կը կասէն, եթէ մէկին 8 հունգ ունեցած լինէին:

568. Երեք եղբայրների տարիքը միասին 72 է: Փոքր եղբայրը միջակից երկու անգամ, իսկ մեծից երեք անգամ փոքր է: Ամեն մէկը քանի տարեկան է:

569. Երեք երեխաներ միասին 3 դաստա թուղթ գնեցին: մէկը 8 կոպէկ աւելի, միւսը՝ 13 կոպէկ, իսկ երրորդը 15 կոպէկ: Ի՞նչպէս պէտք է բաժանեն նրանք այդ թուղթը:

570. Երեք գիւղացիներ ծախած պանրի համար առերականից ստացան 100 բուբլի: Ո՞րքան փող ստացաւ ամեն մէկը, եթէ մէկը 4 փութ ծախեց, միւսը՝ 7, իսկ երրորդը՝ 9 փութ:

571. Մին զգեստի համար 15 արշին մետաքսէ կտոր գնեց և 3 արշին էլ նոյն գնով թաւիշ. մետաքսէ կտորին նա 48 բուբլի թաւիշի գնից աւելի վճարեց: Նա մրգան փող ծախսեց:

572. Թէյավաճառը մի վաճառականի ծախսց 14 ֆունտ թէյ և 5 փութ շաքար 72 բուբլու, իսկ միւս վաճառականին նոյն գնով կէս փութ թէյ և նոյնպէս 5 փութ շաքար 90 բուբլու: Ի՞նչ արժէ շաքարի փութը:

573. Կառապանը մի ժամում անցնում էր 8 վերստ իսկ երկաթուղու գնացքը՝ 4 անգամ աւելի: Գնացքից 3 ժամ յետոյ՝ քանի վերստ յետ կը մնայ կառքը:

574. Քաթանի 72 արշինանոց կտորից մի քանի հատ 6 արշինանոց սաւան կարեցին: Ո՞րքան արժէ 7 սաւանը, եթէ բոլոր սաւանները 24 բուբլու են ծախել:

575. Մրգավաճառը 12 գրւանքայ փշատ ծախսց: Ո՞րքան ստացաւ նա 5 գրւանքի համար, եթէ բոլորի համար նրան 96 կոպէկ վճարեցին:

576. Երկու ատաղձագործներ միասին 27 բուբլի վաստակեցին: Ո՞րքան փող ստացաւ ամեն մէկը, եթէ մէկը 5 օր բանեց, իսկ միւսը՝ 4 օր:

577. Մանրավաճառը 2 գիւմին բաժակ գնեց՝ կէս գիւմինը 20 կոպէկով. բաժակների մի երրորդ մասը կոտրաւեց, մնացածները նա ծախսց 4-ական կոպէկով: Ո՞րքան վեաս ունեցաւ նա:

578. Արևածաղկի 21 գրւանքայ սերմից հանում են 4 գրւանքայ ձէթ: Ո՞րքան սերմ է հարկաւոր 12 գրւանքայ ձէթ հանելու համար:

579. Հինգ գրւանքայ ցորենից 3 գրւանքայ օոլայ է դուրս դալիս: Քանի գրւանքայ օոլայ դուրս կը գայ 60 գրւանքայ ցորենից:

580. Գինեվաճառը 2 շիշ 45 կոպէկանոց գինին խառնեց 3 շիշ ջրի հետ: Ո՞րքան արժէ ջրախառն գինու շիշ:

581. Երկու հիւսն տուն շինելու համար միասին 65

րուբլի ստացան: Մէկը միւսից 13 բուբլի պակաս ստացաւ: Ո՞րքան ստացաւ ամեն մէկը:

582. Մրգավաճառը 90 հատ խնձոր ու կիտրոն ունէր: 12 խնձոր ծախելուց յետոյ՝ նրա մօտ մնացած խընձորների թիւը երկու անգամ աւելի եղաւ կիտրոնների թից: Ո՞րքան խնձոր ու կիտրոն ունէր նա:

583. Երկու քաղաքների միջև եղած տարածութիւնը 68 վերստ է. այս քաղաքներից ճանապարհ ընկան երկու կառքեր. մէկը մի ժամում 9 վերստ էր անցնում, միւսը՝ 8 վերստ: Քանի ժամ անցած՝ նրանք իրար կը հանդիպեն:

584. Դերձակը 63 արշին մահուղից 12 վերարկու կարեց: Քանի արշին մահուղ գնաց 4 վերարկուի:

585. Գինեվաճառը երկու տեսակ գինի խառնեց. 3 շիշ 7 բուբլիանոց և մի քանի շիշ՝ 4 բուբլիանոց. այս բոլոր խառնած գինին նա ծախսց 65 բուբլու, 8 բուբլի վաստակ անելով: Ո՞րքան էր երկրորդ տեսակի գինին:

586. Երկու տակառներում 24 վեգրօ ջուր կար. Երբ որ մէկի միջից միւսի մէջ 4 վեգրօ լցրին, նրանց միջի ջրերը հաւասարեցին: Ո՞րքան ջուր կար իւրաքանչիւրի մէջ:

587. Երկու ներկարարներ տուն ներկելու համար 18 բուբլի ստացան: Ո՞րքան պէտք է ստանայ իւրաքանչիւրը, եթէ մէկը 4 օր բանեց, միւսը՝ 5 օր:

588. Փայտավաճառը ծախել էր 6 սաժէն ուռի փայտ՝ սաժէնը 9 բուբլով, 4 սաժէն բարդի փայտ՝ 7-ական բուբլով և 3 սաժէն եղինի փայտ. Բոլորի գինը 100 բուբլի էր եղել: Ի՞նչ գնով էր ծախւում եղինի փայտի սաժէնը:

589. Երկու քաղաքներից միաժամանակ իրար հանգէտ դուրս եկան երկու երկաթուղային գնացքներ. մէկ գնացքը բառորդ ժամում անցնում էր 8 վերստ, իսկ միւսը՝ նոյնքան ժամանակում՝ 7 վերստ: Ո՞րքան է երկու քաղաքների միջի տարածութիւնը, եթէ երկու գնացքներն իրար հանդիպեցին մէկ ու կէս ժամից յետոյ:

590. Տասնըհինգ փուլթ հաճարից 4 վեղրօ օղի է դուրս է գալիս: Ո՞րքան օղի դուրս կը դայ 45 փթից:

591. Դերձակուհին զգեստ կարելու համար մինոյն գնանոց երկու բրդէ կտոր գնեց: Մէկ կտորը 14 արշինանոց էր, միւսը՝ 18. արշինանոց: Ի՞նչ արժէ իւրաքանչիւր կտորը, եեթէ դերձակուհին երկրորդ կտորին 12 բուլթ աւելի վճարեց:

592. Գիւղացին ծախելու համար սագեր ու բագեր էր գնում՝ մի գիւղում նա 8 սագ և 15 բադ գնեց 31 բուլթու, իսկ մի ուրիշ գիւղում նոյն գներով, 3 սագ և 15 բադ գնեց 21 բուլթու: Ո՞րքան վճարեց գիւղացին մի բադին:

593. Տանտիկինը 5 նարինջ և մէկ ու կէս տաննեակ խնձոր գնեց 70 կոպէկով: Ո՞րքան արժեն նարինջներն ու խնձորներն առանձին առանձին, եթէ նարինջի հատը խընձորի հատից 6 կոպէկ աւելի թանդ արժէ:

594. Աւազնը երկու խողովակ սւնի. մէկով մի բոպէում 12 վեղրօ ջուր է լցում, իսկ միւսով մի բոպէում 8 վեղրօ ջուր է դուրս թափում: Քանի բոպէում կը լցէ աւազանի կէսը, եթէ նա 72 վեղրօ ջուր է առնում:

595. Տանտէը և նրա կեցողը միասին մէկ ու կէս դիւժին աթոռ գնեցին: Ամեն մէկին քանի՞ աթոռ բաժին ընկաւ, եթէ կեցողը 24 բուլթի վճարեց, իսկ տանտէը՝ 6 բուլթի աւելի:

596. Ռւսուցի ունեցած գրչակոթերն ու մատիտները միասին 90 հատ էին: Երբ որ նա աշակերտներին 27 մատիտ և 21 գրչակոթ բաժանեց, մնացած մատիտները 5 անգամ աւելի եղան գրչակոթերից: Որքանն էր գրչակոթ և մրգանը մատիտ:

597. Երեսուն վեղրանոց լիքը տակառից ջրի մի մասը թափեցին: Ո՞րքան է թափած ջուրը, եթէ տակառի մէջ թափածից 4 վեղրօ աւելի մնաց:

598. Երկու ռւսուցիներ պէտք է 54 աշակերտական տետրակիներ ուղղէին. մէկ ռւսուցիչը կարող է այդքանը

6 ժամում ուղղել, միւսը՝ 3 ժամում: Ո՞րքան ժամանակում նրանք միասին կուղղեն այդ տետրակիները:

599. Մէկը սոմառը 11 բուլթով գնած 7 սոմառ գարին փոխեց 6 սոմառ ցորենի հետ: Ի՞նչ գնով պէտք է նա ծախէց ցորենի սոմառը, եթէ ուզում է 7 բուլթի վաստակ ստանալ:

600. Վաճառականը բրդի կտորի իւրաքանչիւր 8 արշինը առնում էր 10 մանէթով, իսկ ծախում էր նա իւրաքանչիւր 8 արշինը 14 մանէթով: Ծախած քանի՞ արշին կտորից նա 36 մանէթ վաստակ ունեցաւ:

601. Բանւորը ամիսը 15 մանէթ է վաստակում, իսկ ծախսում է 12 մանէթ: Որքան փող կը մնայ նրա մօտ կէս տարում:

602. Մէկին չորս հունձք ստանալով՝ 36 սոմառ ցորեն կասեցին: Ո՞րքան ցորեն կը կասէին, եթէ մէկին 7 հունձք ստանային:

603. Վաճառականը 56 արշինանոց մի կտոր լաստիկ ունէր. այս կտորից նա այնքան ծախեց, որ մնացածը 6 անգամ ծախածից պակաս եղաւ: Ո՞րքան փող ստացաւ վաճառականը ծախած լաստիկի համար, եթէ իւրաքանչիւր 4 արշինը նա մի բուլթով ծախեց:

604. Ռւսուցիչը երկու դասարաններում 69 թերթ թուղթ բաժանեց. առաջին դասարանի աշակերտները երկրորդ դասարանի աշակերտներից երեք անգամ աւելի թուղթ ստացան և բացի սրանից՝ 5 թերթ: Ո՞րքան թուղթ է բաժանւած իւրաքանչիւր դասարանում:

605. Խառնել են 9 ֆունտ 5 կոպէկանոց բրինձը 4 ֆունտ 3 կոպէկանոց բրնձի հետ և 5 կոպէկ վաստով ծախել են: Ի՞նչ գնով էին ծախել խառնուրդի ֆունտը:

606. Երկու արտագրողներ 76 թերթ թուղթ արտագրեցին, մի արտագրողը 3 օր աշխատեց օրական 6 ժամ, իսկ միւսը 5 օր՝ օրական 4 ժամ: Քանի՞ թերթ արտագրեց ամեն մէկը:

607. Գինեվաճառը ջրի հետ խառնեց 12 վեղրօ դինի,  
որի վեղրօն 8 բուբլի արժէք: Քանի վեղրօ ջուր նա խառ-  
նեց, եթէ կարելի եղաւ առանց վաստակի ու վասսի վեղ-  
րօն 6 բուբլով ծախել:

608. Պոստատանում գնեցի 28 հատ երեք և եօթը  
կոպէկանոց նամակադրոշմներ. երեք կոպէկանոց նա-  
մակադրոշմները 6 անգամ աւելի էին եօթը կոպէկնոցնե-  
րից: Արքան փող եմ ծախսել:

609. Եթէ մրգավաճառը նարնջի հատը 9 կոպէկի  
ծախելու լինի, այն ժամանակ 20 կոպէկ վաստակ կունե-  
նայ. Էսկ եթէ հատը 6 կոպէկի ծախելու լինի, 10 կոպէկ  
վաստակ կունենայ: Քանի նարինջ ունէր մրգավաճառը:



—————

### Յ. ՏԵՐԱՔԵԱՆԻ ԾԱԽՈՒ ԳՐԹԵՐԸ

1. Դասաւանդութեան ուղեցոյց, օրինակելի դասեր և  
նըանց տեսութիւնը . . . . . 1 ր. —
2. Իրաշրջանների վերածւած թւարանական խնդիրների  
ժողովածու: Ա. և Բ. տարիների դասընթաց . . . . . 30 կ.
3. Հարտման-Ռուզամի Իրաշրջանների վերածւած թւա-  
րանական խնդիրների ժողովածու: Գ. տարւայ  
դասընթաց: Բ. տպագրութիւն . . . . . 30 կ.
4. Նոյն զրքի Դ. տարւայ դասընթաց . . . . . 35 կ.
5. Դեռահանների ազատ՝ ընթերցանութիւնը (տեսու-  
թիւն և յանձնաբարելի ու մերժելի զրքերի հա-  
մառօտ գրախօսութիւն). . . . . 40 կ.
6. Դեռահաններն ի՞նչ կարդան (350 յանձնաբարելի ու  
մերժելի զրքերի համառօտ գրախօսութիւն) . . . . . 25 կ.

1473

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0064710

